




ԶՄԻՍԾԻՆ



ՀԱՅԿԻՍՏԱՆԻ



ԼԱ
ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Յոնեւոյր

1974





ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական քարոզ փրկչի նրաշափառ և սուրբ Նճնդյան սունի առթիվ Մայր տաճարում	3
ԽՈՐԵԱԿԻՎԱԿԱՆ—Ամանորի և ս. Նճնդյան խոմեր	7
Ամանորի և փրկչի մյաշափառ և սուրբ Նճնդյան սուների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս, Նորին Առաք Օծուխյուն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների Քոզնոր սրտերի ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների ղեկավարների միջև փոխանակված տղայնյր մատուցերն ու շքանշանները	10
Ամենայն Հայոց Վեհապետ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և սուրբ Նճնդյան սուների առթիվ՝ ողջոված Հայաստանայց եկեղեցու նվիրապետական երևյալ Աթոռներին, թեմական թուրք առաջնորդներին և եկեղեցական համայնքներին	13
Վեհապետ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Միեհասարների սովետի հախազան Գրիգոր Ա. Արզումանյանին	16
Շնորհավորական ճառագրերի փոխանակում Նոր տարվա առթիվ Հայոց Հայրապետի և Հայկական ՍՍՀ Միեհասարների սովետին՝ սուրբթևոյ հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գառնարյանի միջև	18
Սուրբ Նճնդյան հայրապետական պատարագ և քարոզ Մայր տաճարում	17
Հակաթուփ դիրքերում	19
Ամանորի հանդիսություն հոգևոր ճեմարանում	24
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	38
ՆԵՐՍԵՍ Մ. ՎՐԴ. ՊՈԶԱՊԱԼՅԱՆ—Կրոնական խորհրդածություններ Հիսուսի անճանաչողության կազմավորման մասին	39
ԳԵՎՈՐԳ ԱՐԳԱՐՅԱՆ—Վերածնություն Գրիգոր Նարեկացու «Հարության տաղի»	42
Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի	49

ԽՄԲԱԿՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՄԱԳՐԻ ԽՄԲԱԿՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 11/1 1974 թ.: Աստղագրված է տպագրության 14/II 1974 թ.:

Տպագրական 4 ժամով, թուղթ 60×84¹/₂, պատվեր 9

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1974 թ.

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ՈՌԱԶՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԱՍԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈՋ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐՔ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(1974 թ. հունվարի 6)

«Քրիստոս ձնաւ և յայտնեցաւ»:

Ավելի լույս մարդկանց մտքերին:

Ավելի խաղաղություն մարդկանց սրտերին:

Սիրեցյալ ժողովուրդ մեր որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի:

Մեր երկրագունդը մի անգամ նա իր շրջանը կատարեց արևի շուրջ, հավետ հպատակ տիեզերական օրեցօրերին: Խորհել թե ողջ տիեզերքի մարմինները, անթիվ-անհամար տարիներ, դարեր շարունակ, կան ու կատարում են իրենց ընթացքը, միշտ հպատակ նույն ներդաշնակ օրինաչափության... Ի՞նչ հրաշք է՝ սա, ի՞նչ առեղծված:

Ահա հիացմունքը և հարցումը տիեզերքի առաջ կանգնած մարդու:

Հատկապես վերջին մի քանի հարյուրամյակների ընթացքում, որոնող միտքը մարդու, հետզհետե սրբագրեց իր հին սխալ պատկերացումները ու սկսեց ուղիղ ճանաչել տիեզերքը և հայտնաբերել նրա ճշմարիտ օրենքները: Մարդու իմացականությունը տակավ պայծառացավ ու կարողացավ հստակ լույսի տակ տեսնել ու հասկանալ, ինչ որ իրենից դուրս, իրենից անկախ և իրենից վեր՝ գո էր առարկայորեն: Դարերի մշտյը սկսեց փայտավել, եղավ ավելի լույս մարդկանց մտքերում, որով և եղավ ավելի լույս տիեզերքում: Մարդու իմացական լույսն է որ սկսեց ճանաչելի դարձնել տիեզերքը նյութի և շարժումի: Ի՞նչ հրաշք է, ի՞նչ առեղծված, նաև իմացության ուժը մարդու:

Տիեզերքի ու նրա օրենքների հայտնաբերումը, թեև տակավին հեռու է իր լրումին հասած լինելուց, սակայն մեր օրերի գիտության ու տեխնիկայի աննախընթաց նվաճումները ստուգապես ցույց են տալիս ճշմարտությունը մարդկային իմացականության մեծ հաղթանակների: Հաստատ կարող ենք ասել այլևս, թե տիեզերքը ճանաչելու իրենց խոչանքի մեջ, մարդիկ աչժմ ուղիղ ճանապարհի վրա են գտնվում: Ավելի լույս է լինում մարդկանց իմացականության աշխարհում, ավելի լույս է լինում նյութական տիեզերքում:

Հեռու անցյալում, երկար ժամանակ, մարդիկ՝ աշխարհն ու կյանքը ճանաչում ու բացատրում էին զգացական, երևակայական տվյալներով, եթե

կուզեք, ասե՛նք՝ միստիկ, իդեալական պատկերացումներով: Դա սխալ ճանաչողություն էր: Հարկ եղավ որ մարդկությունը երկար ճանապարհ կտրի և հազար ու մի խարխափումների, եղծումների ու ողբերգությունների միջով անցնի, հասնելու և գտնելու համար՝ ճշմարիտ հտրաբերությունը ճանաչողի ու ճանաչելիի՝ աչիմքն մարդու և աշխարհի ու կյանքի միջև: Այս արդյունքը, այս բարձունքը, որին հասած է այսօր մարդու իմացական հզորությունը, նրա հիասքանչ հաղթանակներից մեկն է հանդիսանում անկասկած:

Այստեղ կանգնած՝ հարց տանք սակայն, թե ինչքա՞ն լուսավորված ու պայծառացած վիճակում է գտնվում մարդու սիրտը՝ ավելի ճիշտ ասած, մարդու հուզական, զգացական աշխարհը, նրա հույզերի, տենչերի ու ձգտումների ներաշխարհը:

Դառնությամբ պետք է հաստատենք թե նույն մարդը տակավին հեռու է իր ներաշխարհում ավելի լույս սփռելուց, իր կյանքում ներդաշնակ մի օրինաչափության ենթարկվելուց:

2եմք ժխտում նյութական աշխարհի ներգործումը մարդու հոգեկանի վրա: 2եմք ժխտում ընկերային-տնտեսական տվյալների պայմանավորող ազդեցությունը նրա գիտակցության վրա: Սակայն ինչպես էլ ըմբռնենք մարդու հոգեկանը, և ինչ կերպ էլ բացատրենք մարդկային գիտակցության ծագումն ու զարգացումը, առարկայական ճշմարտություն է որ հոգեկան-գիտակցականը՝ ինքնուրույն, ինքնավար մի իրողություն է, նոր որակ է, նոր իրականություն է. կարևոր չափով իրեն հատուկ և միայն իրեն հատուկ, ուրույն օրենքներով ղեկավարվող:

Մարդկության պատմական փորձից և մեր ապրած արդի ընկերային ու միջազգային կյանքի փորձից հաստատում ենք թե մարդը, հոգե-բարոյական տեսակետից, հեռու է զարգացման այն մակարդակից, որին հասել են մեր օրերին նրա իմացական ուժերը:

Տիեզերքը ճանաչելու և մվաճելու ճանապարհին գտնվող մարդը, հեռու է, ավաղ, իր հոգին, իր սիրտը ուղիղ ճանաչելուց, հեռու է մանավանդ ավելի լույս սփռելուց իր ներաշխարհի մեջ, ավելի հավասարակշռություն ու ներդաշնակություն ստեղծելուց իր զգացական ու կամային արտահայտությունների մեջ: Մարդը տակավին մեծ չափով խաբխափում է իր զգացումների, իր տենչերի ու ներքին մղումների մշուշի մեջ: Հեռու է մանավանդ իր անհատական, ընկերային ու քաղաքական կյանքը բարոյական մի օրինաչափության ենթարկելուց, հակառակ վերջին մի քանի հազարամյակների հերոսական ճիգերին, մարդկության մեջ բարոյական օրենքը կենսագործելու:

Հին և Նոր Կտակարանները, այլ կրոնական պատգամադրքեր և բազում փիլիսոփաներ, գիտնականներ, բանաստեղծներ, ինչքան հիասքանչ բարոյական պատվիրաններ, ինչքան մարդասիրական վեհ գաղափարներ ու զգացումներ առատորեն բաշխել են եսասիրական մղումների քառսի մեջ խաբխափող ու տառապող քաղաքացիներին: Եվ, սակայն, դրանք բավարար չափով չեն կարողացել լուսավորել մարդու հոգու քարանձավները, ձերբազատելու համար նրան եսակենտրոն զգացումների, ու տենչերի կապանքներից, որոնք արմատներն են հանդիսանում բոլոր չարիքների, մարդկային անհատական, ընկերային ու միջազգային կյանքը հաճախ վերածելով դժոխքի:

Մարդկանց կյանքը բարենորոգելու և վերակերտելու համար աշխարհին իրենց պատգամը բերած մեծ մտածողներից ու գործիչներից վեր, այսօր մեր գիտակցության մեջ հառնում է աստվածային պատկերը Փրկչին մեր Հիսուսի:

Քրիստոսի, որ Իր իսկ բաբախող սիրտը աշխարհին բերեց ու զոհաբերեց, որպեսզի մարդկանց «քարեղեն սրտերը» սիրով ճմլվեն, ինչպես ուսուցանում էր ութ հարյուր տարի առաջ մեր հավատավոր ժողովրդի մեծ զավակ Խորենացի Ծնորհալին:

Ահա ճշմարիտ ճանապարհը մարդկային կյանքի բարենորոգման, վերականգնման, հոգիների փրկության: Քրիստոսի սիրով լուսավորել, խաղաղեցնել, ազնվացնել մարդու սիրտը, նրա հոգեկան ներաշխարհը: Մենք հավատում ենք այս գերազույց ճշմարտության:

Թեև երկու հազար տարիներ հետո տակավին, Հիսուսի սիրո և խաղաղության Ավետարանը կյանքի չի կոչված բավարար չափով, և անցյալ դարերի տխուր փորձառությունը ունենք՝ քրիստոնեական եկեղեցիների ղեկավար իշխանությանց սխալ կողմնորոշումների, հատկապես Եվրոպայում, և որ այդ իշխանությունները հաճախ հեռացել են ժողովուրդների խոնարհ զանգվածներից ծառայելու առաքելությունից և դարձել են նույնիսկ արգելափակիչ ազդակներ՝ գիտության և ընկերային-տնտեսական արդար հարաբերությունների զարգացման ճանապարհի վրա, միևնույն է, մեզ մնում է ընթանալ նույն Ավետարանի ուղիով, այս անգամ, սակայն, իրապես, հարազատորեն, բանիվ և գործով հավատարիմ մնալով Աստվածորդու ոգուն ու պատգամներին, Հիսուսի ճշմարիտ առաքելությանը: Համարձակ եռանդով, անհոգեաբեկ ու լավատես գիտակցությամբ պետք է գնալ Հիսուսի լուսավորած ուղիով, որովհետև ղեպի մեր նմանները անպայմանավոր սիրով միայն, հնարավոր պիտի դառնա մարդկանց սրտերը լուսավորել, բյուրեղացնել ու խաղաղեցնել, և բանալ ճանապարհը ղեպի մարդկանց ու ժողովուրդների խաղաղ գոյակցություն ու շինարար գործակցություն: Հիսուս՝ մարդու մշտական վերանորոգումն է, մշտական հեղափոխումը:

Մարդու լուսավորված իմացականությանը պետք է տալ նաև լուսավորված սիրտ:

Եվ արդյոք մեր Մայր եկեղեցու տնական աղերսաճքը այդ չի՞ եղել դարեր շարունակ, ի տես համայն մեր ժողովրդի ծանր՝ ճակատագրի, մշտապես կեղեքված,՝ մշտապես հալածված, մշտապես ազատագրված, հաճախ նահատակված: Հայաստանյայց եկեղեցին, եղել է հարստահարված ու ազատատենց խոնարհ զանգվածների եկեղեցին: Սխալված չենք լինի, եթե հաստատենք թե այս պատմական պայմանների մեջ է որ հայ եկեղեցին, գոնե վերջին մոտ հազար տարիների ընթացքում, հանդիսացել է մարտնչող ու նահատակվող եկեղեցի, վասն Հիսուսի Ավետարանի բուն առաքելության, ի խնդիր մարդասիրական, արդարության ու ազատության պատվիրանների կենսագործման երկրի վրա:

Հայ հավատացյալ զավակներ Մեր, այսօր, երբ միաձնաէջ այս սուրբ տաճարում ցնծությամբ ավետում ենք հրաշալի ծնունդը մեր Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի, Մենք հրավիրում ենք ձեզ մնալու անշարժ՝ սուրբ Ավետարանի հոգևոր-բարոյական վեժի վրա, հաղթահարելու ձեր նսականտրոն զգացումները, հեռու պահելու ձեզ չարի որոգայթներից և որոնելու՝ բարի գործի, արդար գործի ճանապարհները, Ծնորհալի մեր Հայրապետի հետ անձամերույթ աշխատելով:

«Այլ անուն Յիսուս, սիրով քով ճմլեա. սիրտ իմ քարեղեն»:

Դուք բոլորդ անդադար աշխատեցեք «ճանաչել առավելությունը Քրիստոսի սիրո գիտության, որպեսզի լցվեք Աստուծո ամբողջ լիությամբ» (Եփես. 4 19) և «ամենայն դառնություն և բարկություն և զայրույթ և աղադակ և հույ-

հոյություն թող վերանան ձեզնից, բոլոր շարություններով հանդերձ: Միմյանց հետ եղեք քաղցր, գթած՝ ներելով միմյանց, ինչպես և Աստված ներեց մեզ Քրիստոսով» (Եփես. Գ 81—82):

Թող ավելի լույս և ավելի սեր լինի ձեր բոլորի սրտերում:

Թող ավելի լույս ու ավելի սեր լինի բոլոր մարդկանց, բոլոր ժողովուրդների սրտերում, որպեսզի աշխարհում լինի ավելի արդարություն, ավելի ազատություն, ավելի խաղաղություն:

Այս պայմաններում է որ մոխիրներից վերածնած մեր մայր երկիրը, հպարտ, բարդիի մման հասակ նետած արդի մեր Հայաստանը, տակավ պիտի մոռանա իր ողբերգական անցյալը, պիտի բուժե իր բոլոր հին վերքերը ու պիտի տեսնե, նույն այս վերածնունդի արևի տակ, իր ազնիվ երազանքների իրականացումը, եղբայրացած ազգությունների հզոր միության, առաջընթացի կյանքի ուղիով: Այս լավատեսությամբ Մենք ողջունում ենք նոր տարին ու մաղթում որ մեր մայր հայրենիքի համար՝ մա լինի շինարար աշխատանքի, ստեղծարար ներշնչումների և համաժողովրդական ընթրության մի արևոտ տարի:

Փառք խաղաղ ու արդար աշխատանքի մեր հայրենաշեն ժողովրդին:

Փառք աստվածային սիրով եղբայրացած մարդկային աշխարհին:

Ծնորդներովը Հիսուսի սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության, լավատես ոգով բանալք դռները նոր տարվա և ողջունենք նորից ծագող «արեգակը արդարության»:

Հավիտենական սուրբ Էջմիածնից և Մեր սրտից ձեզ բոլորիդ շնորհավոր՝ նոր տարի և սուրբ Ծնունդ և օրհնություն հայրապետական:





ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ԽՈՂԵՐ

Նոր տարի է և ս. Ծնունդ:

Պատմության գիրկն անցավ 1878 թվականը՝ իրադարձություններով հարուստ ևս մի տարի թե՛ ողջ աշխարհի և թե՛ մեր եկեղեցու ու ժողովրդի համար:

Մարդկությունը երախտագիտությամբ է վիակում 1878 թվականը, որպես պատմություն, և վառ հույսերով դիմավորում 1874-ը, որպես նոր կյանքի սպիտակ մատյան. «Նորոգեցարուք ի նորոգութիւն մտաց ձերոց... և մեք ի նորոգումն կենաց շրջեսցուք» (Հովմ. ԺԲ 2, Զ 4):

Քրիստոնյա մտածողության համար ներքեք էլ պատահականություն չէ Նոր տարվա և ս. Ծննդյան տոների այս հաջորդականությունը, ժամանակի և կյանքի խորհուրդների աղերսը:

Արդարև, մարդկային ամեն մի նոր ծնունդ կամ գոյություն աշխարհի վրա հավիտենական կյանքի, Ավետարանի բացատրությամբ՝ «առաւել կեանք»-ի տոնն է՝ նորոգված ժամանակի մեջ.

«Զի հիցն ամն և արդ նոր եղև ամենայն» (Բ Կորթ. ԺԲ 17):

Նոր տարվա այգաբացին Քրիստոսի ծր-նունդը մարդկությանն ուղղված սրբազան մի կոչ է հոգևոր, բարոյական նորոգված կյանքով ապրելու համար:

Նորոգված կյանքով ապրելու զգացումի և գիտակցության մեջ մարդու համար ժամանակը, տարին թարմանում, երիտասար-

դանում է, իսկ ինքը մարդը՝ իր հուզական, զգացական և իմացական աշխարհով առնականանում, պայծառակերպվում և լուսն գալիքի նկատմամբ վառ հույսերի, տենչերի և անկոտրում հավատի մեջ աշխարհն է՛լ ավելի է գեղեցկացնում, և զգացվում է կյանքի վեհությունն ու մպատակապացությունը, կյանքի բանաստեղծությունն ու հավերժի բերկրանքը:

«Մարդկանց կյանքը բարեմորոգելու և վերակերտելու համար աշխարհին իրենց պատգամը բերած մեծ մտածողներից ու գործիչներից վեր, այսօր մեր գիտակցության մեջ հառնում է աստվածային պատկերը Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի,—ասում է Վեհափառ Հայրապետը Մայր տաճարում խոսած ս. Ծննդյան Իր գեղեցկահյուս և քովանդակալից քարոզի մեջ,—որ Իր իսկ բաթախող սիրտը աշխարհին բերեց ու զոհաբերեց, որպեսզի մարդկանց «քարեղեն սրբտերը» սիրով ճմլվեն, ինչպես ուսուցանում էր ութ հայրուր տարի առաջ մեր հավատավոր մտղովրդի մեծ զավակ սուրբ Ներսես Շնորհալից:

Ահա ճշմարիտ ճանապարհը մարդկային կյանքի բարեմորոգման, վերակերտման, հոգիների փրկության: Քրիստոսի սիրով լուսավորել, խաղաղեցնել, ազնվացնել մարդու սիրտը, նրա հոգեկան ներաշխարհը: Մենք հավատում ենք այս գերագույն ճշմարտության:

Այո՛, մարդկության հոգևոր, բարոյական վերածնունդը, կատարելագործությունը՝ ահա նոր տարվա և ս. Ծննդյան տոների խորհուրդն ու պատգամը, որովհետև, ըստ վեհափառ Հայրապետի ծննդյան քարոզի պատկերավոր արտահայտության. «Հիսուս մարդու մշտական վերահորոգումն է, մշտական հեղափոխումը»:

Արդարև, մարդկության բարոյական և հոգևոր կատարելագործումը, խաղաղությունն ու ներդաշնակությունը կարող են իրականանալ միայն և միայն ս. Ծննդյան պատգամներով և Ավետարանի լույսով:

Ավետարանի լույսը միայն կարող է է՛լ ավելի լուսավորել մարդկանց սրտերը, է՛լ ավելի ազնվացնել և խաղաղեցնել մարդկանց հոգիները, որովհետև «Կառնությունը պետք է հաստատենք թե նույն մարդը տակավին հեռու է իր ներաշխարհում ավելի լույս սփռելուց, իր կյանքում ներդաշնակ մի օրհնաշափության ենթարկվելուց», շեշտում է վեհափառ Հայրապետը իր քարոզի մեջ:

Մարդու ազնվացման ճանապարհի վրա Աստուծո պատկերով ստեղծված մարդու գերագույն կոչումն է ժամանակի և կյանքի զույգ մատյանները լցնել աստվածահաճո, մարդասիրական և հայրենամյներ աշխատանքներով, «գրոց արժանի արության գործերով»:

Աշխատանքով վեհանում է մարդը, իսկ հարստանում և գեղեցկանում է նաև կյանքը:

Հայ ժողովուրդը թե՛ մայր հայրենիքում և թե՛ սփյուռքի տարածքի վրա, հանրագումարի բերելով իր ապրած օրերի հաշիվը, քրիստոնեական վառ հավատով, սրտառու լավատեսությամբ, գիտակից և լուրջ պատասխանատվության զգացմունքներով և սրտագին խոհերով քացում է և՛ նոր ժամանակների, և՛ նոր կյանքի մատյանը:

Անցնող տարին մեր եկեղեցու, մեր ժողովրդի և վերածնված Հայոց աշխարհի համար եղավ աղոթքով, աշխատանքով ու ստեղծագործություններով հարուստ պատմական տարի:

Եկեղեցական-ազգային տեսակետից 1973 թվականը դարձյալ հիշատակելի տարի հանդիսացավ նրանով, որ Հայաստանյայց առաքելական եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնության և հովանու ներքո ու Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետի անմիջական ղեկավարության տակ, շարունակեց իր նախախնամական հոգևոր ու պատմական առաքելությունը հայ ժողովրդի կյանքում թե՛ ի հայրենիս և թե՛ ի սփյուռս աշխարհի:

Ամեն սնդ տոնական ու անխափան հիմնեցին եկեղեցու զանգերը և հյուրընկալորեն

բաց և պայծառ մնացին մեր աղոթքի տները հայ հավատացյալ հոգիների առաջ:

Պետք է սրտագին գոհունակությամբ և երախտագիտությամբ արձանագրել, ի մխիթարություն մեր հավատացյալ ժողովրդի, որ Հայոց Հայրապետի անմիջական հսկողությամբ և ղեկավարությամբ այս տարի է՛լ խաղաղ ու արդյունավետ պայմանների մեջ ընթացան Մայր Աթոռի հոգևոր, մշակութային, կրթական, վաճառական շինարարական ու կազմակերպչական աշխատանքները և մեր ներքին թեմական եկեղեցական կյանքը:

Սփյուռքում ևս հայ եկեղեցին ու հոգևորականությունը մեր ազգային-եկեղեցական կազմակերպությունները, մշակութային և այլ հաստատություններ անցնող տարում, ի գին հուսադրիչ երևույթների և սրտագին ջանքերի, բոլորեցին եկեղեցաշեն ու ազգազնվեր գործունեության թելմնավոր և խոստումնալից մի շրջան: Սփյուռքի բոլոր հորիզոնների տակ հայ ժողովուրդը շարունակեց բոլորվել իր Մայր եկեղեցու շուրջ, շարունակեց իր խաղաղ, օրհնապահ և քննական կյանքը՝ ջերմացած իր նախնիների հավատով, ամուր կանգնած ազգային իրավանդությունների վրա, զրահված ջերմ ու իրավ հայրենասիրությամբ:

Հայ ժողովուրդն իր վերածնված մայր հայրենիքում, իր հայրենի սրբազան հողի վրա, իր հարազատ պետականության ապահով ու խաղաղ պայմաններում նոր տարին ղիմավորում է արդար հպարտությամբ, շինարար ու ստեղծագործ աշխատանքի պայմաններում՝ քառացիորեն հրաշքի համագոր սխրագործություններ, նվաճումներ արձանագրելով հայ մշակույթի, հայ արվեստի, գիտության, գրականության, ժողովրդական տնտեսության, լուսավորության, առողջապահության, գյուղատնտեսության քնազավառում, իր հոգևոր, նոր կյանքի կերտման ասպարեզում:

1973 թվականը արդարացիորեն եղավ հաղթանակների, կառուցումների, խիզախումների տարի: Շարք մտան մշակույթի նոր օջախներ, գիտության կաճառներ, արդյունաբերական նոր ձեռնարկություններ, էլեկտրակայաններ, ատոմակայան: Այգեստաններ դարձան խոպան նոր տարածություններ, և մեր ժողովրդի հերոսական, հայրենաշեն աշխատանքով ամբարվեց հազար բերք ու բարիք: Ջերմ բերված այս հոգևոր, դյուրական բարիքներն է՛լ ավելի ամրապնդում են մեր հայրենիքի հզորությունը:

Անցնող տարին դարձավ նաև խաղաղության տարի: Հանգավ պատերազմի օջախը, և լայն հեռանկարներ բացվեցին աշխարհի խաղաղության համար, և մարդկությունը սկսեց թեթև շնչել՝ մեծ հույսեր կապելով

կայուն և արդար խաղաղության հաստատման համար ողջ աշխարհում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, հայ ժողովուրդն ու մայր հայրենիքը նոր տարվա շնորհից, ավելի քան երբեք, հզոր, միասնական, հավատով լի ու կենսունակ կանգնել են իրենց լուսավոր ասլազայի հանդեպ խանդավառող, եկեղեցաշեն, հայրենանվեր հեռանկարների առաջ:

Գալիս է նոր տարին՝ 1974-ը, նոր հույսերի, հզտումների, թռիչքների և խիզախումների տարին: Մեր եկեղեցին և ժողովուրդը հավատով և յավատեսությամբ են նայում յուրե զալիքին:

Թող բարով գա նոր տարին: Թող 1974 թվականը լինի բովանդակ աշխարհի համար խաղաղության, համերաշխության, խաղաղ գոյակցության տարին:

Թող 1974 թվականը ու Էջմիածնի հավերժական օրհնության և հովանու ներքո լինի հայ եկեղեցու համար հոգևոր, նոր վերագարունքի տարին, ազգային-եկեղեցական միասնության և համերաշխության տարին:

Այս զգացմունքներով և խոհերով, հաճուն Ամենայն Հայոց Հայրապետի, «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է բովանդակ հայության Ամենորը և ու Մնունդը՝ Հայոց Հայրապետի սուրբ շրթերով բարեմաղթում:

«Թող ավելի լույս լինի և ավելի սեր լինի ձեր բոլորի սրտերում:

Թող ավելի լույս և ավելի սեր լինի բոլոր մարդկանց, բոլոր ժողովուրդների սրտերում, որպեսզի աշխարհում լինի ավելի արդարություն, ավելի ազատություն, ավելի խաղաղություն»:

Եղիցի, եղիցի և եղիցի:





ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿԶԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐԲ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ
ԺՈՒՍԱՆԱԿՎԱԾ ՈՂԶՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ
ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոռմեական կաթողիկ եկեղեցու քահանայապետ, Նորին Արքայություն
Պ Ո Ղ Ո Ս Զ Պ Ա Պ Ի Ն (Հոռմ),
Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական պատրիարք, Նորին Արքայություն
Դ Ե Մ Ե Տ Ր Ի Ո Ս Ի Ն (Ստամբուլ),
Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք, Նորին Արքայություն
Պ Ի Մ Ե Ն Ի Ն (Մոսկվա),
Ալեքսանդրիայի և Համայն Աֆրիկայի հունաց ուղղափառ եկեղեցու
Պատրիարք, Նորին Արքայություն Ն Ի Կ Ո Ղ Ա Յ Ո Ս Զ-ԻՆ (Ալեքսանդրիա),
Երուսաղեմի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Արքայություն
Բ Ե Ն Ե Գ Ի Կ Տ Ո Ս Ա - Ի Ն (Երուսաղեմ),
Ղպտի ուղղափառ եկեղեցու Պատրիարք, Նորին Արքայություն
Ա Մ Բ Ա Շ Ե Ն Ո Ւ Գ Ա Գ - Ի Ն (Ալեքսանդրիա),
Անտիոքի և Համայն Արևելքի հունաց ուղղափառ եկեղեցու Պատրիարք,
Նորին Արքայություն Է Լ Ի Ա Ս Դ - Ի Ն (Դամասկոս),
Համայն Եթովպիայի Պատրիարք, Նորին Արքայություն
Ա Բ Ո Ւ Ն Ա Թ Ե Ո Յ Ի Լ Ո Ս Ի Ն (Ադիս-Աբեբա),

Հնդկաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն
 ԲԱՍԻԼԻՈՍ ՕԳԵՆԱ - ԻՆ (Քոթայամ),
 Համայն Վրաց Պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
 ԳԱՎԻԹԵ - ԻՆ (Թբիլիսի),
 Ռումին օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
 ԺՈՒՍՏԻՆԻԱՆԻՆ (Բուխարեստ),
 Բուլղար օրթոդոքս եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
 ՄԱՔՍԻՄԻՆ (Սոֆիա),
 Անտիոքի և Համայն Արևելքի մարոնիտ Պատրիարք, Նորին Սրբություն
 կարդինալ ՊՈԼՄԵՈՒՇԻՆ (Բեյրութ),
 Անտիոքի և Համայն Արևելքի հույն կաթոլիկ եկեղեցու Պատրիարք
 Նորին Սրբություն ՄԱՔՍԻՄՈՍ Ե ՀԱՔԻՄԻՆ (Ռամասկոս),
 Անտիոքի ասորի կաթոլիկ եկեղեցու Պատրիարք, Նորին Սրբություն
 ԻԳՆԱՏԻՈՍ ԱՆՏՈՒԱՆ ՀԱՅԵԿ Բ - ԻՆ (Բեյրութ),
 Քենտրբերիի Արքեպիսկոպոս, Համայն Անգլիայի Եպիսկոպոսապետ և
 միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն ՄԱՔԷԼ ՌԵՄՋԻՆ
 (Լոնդոն),
 Աթենքի և Համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
 ՀԵՐՈՆԻՄՈՍԻՆ (Աթենք),
 Սերբիայի և Համայն Հարավսլավիայի Պատրիարք, Նորին Սրբություն
 ՀԵՐՄԱՆԻՆ (Բելգրադ),
 Վարշավայի և Համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
 ՎԱՍԻԼԻՆ (Վարշավա),
 Պրագայի և Համայն Չեխոսլովակիայի միտրոպոլիտ,
 Նորին Գերաշնորհություն ԳՈՐՈՅԵՆ (Պրագա),
 Հայ կաթողիկե եկեղեցու Պատրիարք, Նորին Ամենապատվություն
 ԻԳՆԱՏԻՈՍ ՊԵՏՐՈՍ ՊԱԹԱՆՅԱՆԻՆ (Բեյրութ),
 Կիպրոսի Արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
 ՄԱԿԱՐԻՈՍԻՆ (Նիկոզիա),
 Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
 դոկտ. ՖԻԼԻՊ ՓՈԹԸՐԻՆ (Ժնև),
 Վատիկանի պետական քարտուղար, Նորին Ամենապատվություն
 կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼՈՅԻՆ (Վատիկան),
 Վիեննայի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
 կարդինալ ՖՐԱՆՑ ԿՅՈՆԻԳԻՆ (Վիեննա),
 Փարիզի Արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
 կարդինալ ՖՐԱՆՍՈՒԱ ՄԱՐՏԻՆ (Փարիզ),
 Քրիստոնեական միության քարտուղարության նախագահ,
 Նորին Ամենապատվություն կարդինալ ԺԱՆ ՎԻԼԼԲՐԱՆԳՍԻՆ
 (Վատիկան),
 Մարսելի Արքեպիսկոպոս, Գերաշնորհ
 ՌՈԺԵ ԷԶԵԳԱՐԱՅԻՆ (Մարսել),
 Լատվիական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու Արքեպիսկոպոս,
 Նորին Գերազանցություն Յ. Պ. ՄԱՏՈՒԼԻՍԻՆ (Ռիգա),
 Էստոնական ՍՍՀ ավետարանական-լուսերական եկեղեցու Արքեպիսկոպոս,
 Նորին Գերազանցություն ԱՆԺՐԵԳ ՏՈՌՄԻՆԳԻՆ (Տալլին),
 Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,
 Վերապատվելի ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ (Բեյրութ),

Ֆրանչիսկան սխարանության կուստոդ
ԷՐՄԻՆԻՈՒՆԿԱՐԻՆ (Երուսաղեմ),
 Խաղաղության համաքրիստոնեական կոնֆերանսի գլխավոր քարտուղար
դոկտ. ԿԱՐՈՒՅՈՒՆ (Պրագա),
 Իրաքի պապական նվիրակ, **Գերաշնորհ**
ՇԱՆՌՅՈՒՊԻՆ (Բաղդադ).
 Մխիթարյան ուխտի արքանայր, **Գերապաշնառ հայր**
ՊՈՂՈՍ վարդապետ **ԱՆԱՆՅԱՆԻՆ** (Վենետիկ),
 Մխիթարյան ուխտի արքանայր, **Գերապաշնառ հայր**,
ԳՐԻԳՐԻՍ վարդապետ **ՄԱՆՅԱՆԻՆ** (Վիեննա),
 Վերապատվելի **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵԼՎԱԺՅԱՆԻՆ** (Մարսել),
 Վերապատվելի **ՍԵՆԵՔԵՐԻՄ ՍՅՈՒԼԱՀՅԱՆԻՆ** (Նյու-Յորք):

«...եւ յերկիր խաղաղութիւն»:

Ջերդ Սրբություն,

Քրիստոնյա աշխարհն ամբողջ և ժողովուրդները բոլոր մի անգամ ևս
 ցնծությամբ ընդունում են մեծ ավետիսը մեր Փրկչի՝ Քրիստոսի ծննդյան և
 լսում երկնառաք ծայնը խաղաղության:

Խաղաղություն համայն մարդկության, խաղաղություն բոլոր ազգերին:
 Խաղաղություն հեռավորաց և մերձավորաց:

Այս նվիրական պահին, Մեր սիրտը լի եղբայրական սիրո զգացումնե-
 րով, ողջունում ենք Ջերդ Սրբությանը և մաղթում, որ սուրբ Ծննդյան շնորհ-
 ներով է՛լ ավելի ճառագայթեն ու աճեն մարդկանց սրտերում և ժողովուրդ-
 ների կյանքում փոխադարձ սերն ու խաղաղ համակեցության ոգին, որոնց
 հաղթանակի համար Ջերդ Սրբությունը ևս մնում է միշտ աղոթող և եռան-
 դուն մի գործիչ մեր օրերի աշխարհում:

Թող Աստված օգնական լինի Ջեզ և հաջողությամբ պսակի առաքելա-
 կան ձեր մեծ եկեղեցու սուրբ առաքելությունը:

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա.

ՍԱՅՐԱԿՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՎ ԿԱԹՈՒԼԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. ԷԶՄԻԱՄԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի իրաջախառ
 և սուրբ Ծննդյան շնորհավորական գրություններին ի պատասխան տաացվել
 են քույր եկեղեցիների հոգևոր պետերի և կրոնական այլ համայնքների ու
 կազմակերպությունների ղեկավարների՝ այդ սուրբ ուղարկված ջերմագին
 շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծա-
 րորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցու-
 թյան սրտագին ոգին քույր եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և
 կազմակերպությունների միջև:

Համուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստաց-
 ված պատասխան շնորհավորականների համար:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՒՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ
ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Խաղաղութեան ծայն հնչեցաւ»:

Քրիստոնյա աշխարհն ամբողջ և ժողովուրդները բոլոր մի անգամ ևս
ցնծությամբ ընդունում են մեծ ավետիսը մեր Փրկչի՝ Քրիստոսի ծննդյան և
յսում երկնառաջ ծայնը խաղաղության:

Խաղաղություն համայն մարդկության, խաղաղություն բոլոր ազգերին-
խաղաղություն հեռավորաց և մերձավորաց:

Սուրբ Ծննդյան տոների սեմին մեր ժողովուրդի բոլոր զավակներին ան-
խտիր տալիս ենք Մեր հայրապետական օրհնությունը և մաղթում նրանց
եղբայրության ու համերաշխ գործակցության ոգի, որոնք զրավականներն են
իրավ խաղաղության՝ անհատական, ընտանեկան թե եկեղեցական-ազգային
կյանքի մեջ:

Սուրբ Ծննդյան շնորհներով թող է՛լ ավելի ճառագայթեն ու աճեն սերն
ու խաղաղ աշխատանքի պտույդները նաև ձեր պատմական Աթոռից ներս. ձեր
զինվորյալ միաբանության ու հավատացյալ ժողովրդի կյանքում՝ Ձերդ սրը-
բազմության հոգեշեն առաջնորդության ներքո:

Սուրբգրական Մայր Հայաստանից և քրիստոսապարզ և սուրբ Էջմիած-
նից ձեզ բոլորիդ ողջույն և օրհնություն և շնորհավոր նոր տարի և սուրբ
Ծնունդ և Աստվածահայտնություն Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի, որ է
օրհնյալ այժմ և հավիտյան. ամեն:

Եղբայրական սիրով ու քրիստոսավանդ ողջունի՛վ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անուամբ ստացվեցին սահմանափակ և հարգալից զգացմունքներով զեղուն քաղմաթիվ շնորհավորական ուղևագրեր և նամակներ մեր նվիրակետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին լուր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնաց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:





**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԳՐԻԳՈՐ Ա. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆԻՆ**

Հունվարի 10-ին, չորեքշաբթի օրը, ժամը 11-ին, Երևանում, Կառավարական տանը, Վեհափառ Հայրապետը Նոր տարվա առթիվ այցելություն է տալիս Հայրական ՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Գրիգոր Ա. Արզումանյանին:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էր Մայր Աթոռի դիվանապետ տ. Արսեն եպս. Բերքերյանը:

Հայոց Հայրապետի և ՀՍՍՀ Մինիստրների սովետի պարոն նախագահի միջև տեղի է ունենում ջերմ գրույց՝ սրտագին մթնոլորտում:

Զրույցին ներկա էին Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի գործերի կառավարիչ Հ. Ե. Վարդանյանը և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Տ. Գառապարյանը:





**ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ՆՈՐ
ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ
ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ
ՄԻՋԵՎ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐԳԻՍ
ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ**

Երևան

Հանում Հայաստանյայց եկեղեցու և հայատաղյալ ժողովրդի, հանույրով
շնորհավորում ենք Ձեզ Նոր տարվա առթիվ՝ մաղթելով Ձեզ քաջառողջություն
և միշտ հաջողություններ Ձեր հայրենանվեր գործունեության:

Նոր տարին թող խաղաղության և ժողովուրդների միջև բարի կամեցու-
ղությամ տարի լինի համայն աշխարհի համար ու նաև մշտապես կառուցման
ու ծաղկումի տարի՝ մեր մայր հայրենիքի համար, գերագույն հույսն ու անու-
վենը՝ համայն հայության, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի:

ՎԱԶԳԵՆ Ա.

**ՄԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

ԼՋՄԻԱԾԻՆ

•
•

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՄՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՎԱԶԳԵՆ Ա.-ԻՆ**

Էջմիածին

Ձերդ Սրբություն, հաճեցեք ընդունել Նոր տարվա իմ ջերմ շնորհավո-
րանքները և Ձեզ քաջառողջության, երջանկության ու քառորության իմ լա-
վագույն մաղթանքները: Թող մեր տարին լինի մեր հայրենիքի ու ողջ աշխար-
հի խաղաղության ու ժողովուրդների բարեկամության տարի:

ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Երեվան





ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱԾԱՐՈՒՄ

Հունվարի 5-ին, շաբաթ: Ծրագալույց Ծճնդյան: Երեկոյան Մայր տաճարում պաշտովում է Ծճնդյան Ծրագալույցի ժամերգությունը, որին ներկա են լինում բազմաթիվ հավատացյալներ:

Ծրագալույցի ժամերգությանը և արարություններից նախագահում է Վեհափառ Հայրապետը:

Հոգևոր ճեմարանի սաներն ընթերցում են Դանիելի գրքի «Երից մանկանց» օրհներգությունը:

Ծրագալույցի ժամերգությունից հետո սկսվում է ս. պատարագի արարողությունը: Պատարագում է վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Հավարտ ս. պատարագի տեղի է ունենում Ծճնդյան տոնի նախատոնակը, և Մայր տաճարի կամարների տակ հնչում է «Խորհուրդ մեծ և սքանչելի» Ծճնդյան շարականը:

Ժամերգության ավարտին եկեղեցական թափփոը երգով ու շարականով ուղղվում է դեպի վանական սեղանատուն, ուր օրհնվում են մայրավանքի աղմ ու հացը, և միաբանությունն ու ուսանողությունը ճաշակում են Ծճնդյան նավակատիքի բարիքները:

Հունվարի 6-ին, կիրակի: Տօճ Ծճնդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Մայր տաճարն ու նրա շրջափակը, հակառակ խիստ ձմռան ու ձյու-

նին, դեռևս վաղ առավոտից լեցուն է հավատացյալների հոծ բազմությամբ:

Մայր տաճարում առավոտյան պաշտովում է սուրբ Ծճնդյան հանդիսավոր ժամերգությունը՝ մասնակցությամբ միաբանության անդամների և ուսանողության:


Ժամը 11-ին սկսվում է ս. պատարագը: Տոնական ու զվարթ դուղանջում են Մայր տաճարի զանգերը:

Երգերի, շարականների և դուղանջների ճեքքո Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, հայրապետական լրիվ զգեստավորվածով, եկեղեցական թափփոը առաջնորդվում է Մայր տաճար՝ ս. Ծճնդյան պատարագը մատուցելու:

Ս. պատարագին սպասարկում են տ. Արսեն և տ. Գևորգ եպիսկոպոսները, տ. Գրիգորիս և տ. Մասիս արքեղաները, տ. Հովհաննես և տ. Նշան քահանաները և Մայր Աթոռի սարկավագաց դասը:

Ծճնդյան ս. պատարագի երգեցողությունը տպավորիչ հանդիսավորությամբ կատարում է Մայր տաճարի երգեցիկ խումբը՝ Խորեն Մելիսանջյանի ղեկավարությամբ:

«Հայր մեր»-ից առաջ, ս. Ծճնդյան տոնի ուրախ առիթով, ոգեշունչ քարոզ է խոսում պատարագի Վեհափառ Հայրապետը՝ ավետելով Քրիստոսի ճճնդյան ընդկրանքը և շնորհավորելով ողջ հայության սրբազան տոնը:



Հայոց Հայրապետի քարոզը (տես՝ «Էջմիածին» ամսագիր, 1974 թ., № Ա, էջ 8) նույն օրը, երեկոյան, ձայնաւիժովում է Երեւանի ռադիոյով:

Հավարտ ս. պատարագի Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի հանդիսադրոյամբ, կատարվում է Փրկչի մկրտութեան տոնը՝ Զրօրհմբաց հանդեսը:

Ս. սելանի առաջ դրվում են կաթսաներ՝ լցված ջրով, կաթսաներ, որոնք խորհրդանշում են Հորդանան գետը, որի մեջ մկրտվում է մեր Փրկիչը Հովհաննես Մկրտչի ձեռքով:

Հայոց Հայրապետը օրհնութեամբ և ջրի մեջ ս. մեռոնի հեղմամբ խաչը գցում է ջուրը: Տաճարի կամարների տակ հնչում են «Արօր ձայնն հայրական» և «Ու զարմաւալի» Ծննդյան սքանչելի մեղեդիները:

Հավարտ Զրօրհմբաց հանդեսի Հայոց Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարանի դահլիճ, ուր շնորհավորանքներ է ընդունում ս. Ծննդյան սոնի ուրախ առիթով:

Այնուհետև օրհնութեան խոսք է ասում Հայոց Հայրապետը, շնորհավորում քովանդակ հայության Ամանորն ու ս. Ծննդյան տոնը, օրհնում ազգն ու եկեղեցին, հայրենիքն ու ժողովուրդը և խաղաղութիւն մաղթում ողջ աշխարհին ու համայն մարդկությանը:

Ս. Ծննդյան տոնի առիթով Վեհարանում բոլոր ներկաները աջահամբույրով շնորհավորում են Հայոց Հայրապետին և ստանում Նրա օրհնութիւնը:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը, օրվա տոնի սուրճով, տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում են Գերագույն հոգևոր խորհուրդը, Արարատյան և վրահայոց թեմանի առաջնորդ սրբազաններ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը, տ. Գևորգ եպիսկոպոսը, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսը, Մայր Աթոռի միաբանութիւնը, Արարատյան թեմի թեմական և եկեղեցական խորհուրդների անդամները և Մայր Աթոռի դեկավար պաշտօնյաներ ու հրավիրյալներ:

Ժաշկերույթին ներկա է լինում նաև Հայկական ՍՍՀ Միմիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը:

Սեղանն օրհնում է Հայոց Հայրապետը:

Ժաշկերույթի ժամանակ ներկաներից ոմանք շնորհավորում են Հայոց Հայրապետի Նոր տարին և ս. Ծննդյան տոնը՝ Մայր Աթոռի անսասանութեան, պայծառութեան և Ամենայն Հայոց Հայրապետի կենաց արևշուտութեան ու քաջառողջութեան սրտագին մաղթանքներով:

Նորին Սուրբ Օծութիւնը նույնպես շնորհավորում է բոլոր ներկաների Ամանորն ու ս. Ծննդյան տոնը՝ մաղթելով Մայր Աթոռի օրհնութեան ներքո պայծառութիւն Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցուն, քարօրթիւն հայրենյաց և խաղաղութիւն համայն աշխարհին:

Վեհարանի հարկի ներքո ս. Ծննդյան տոնին նկիրված ընդունելութիւնն ավարտվում է Տերունական աղոթքով:





ՀԱՎԱԹՈՒԻ ԳԻՐՔԵՐՈՒՄ

Վերջերս Ամթիլիասի Տաճկ Կիլիկիայի կաթողիկոսության դիվանը հրապարակել էր անթվակիր մի գրություն՝ ի մասին «Կաթողիկոս Ամենայն Հայոց Մեծի Տաճկ Կիլիկիո» տիտղոսի գործածության, որն ըստ ձևի և ըստ բովանդակության, մի նոր հարձակողական ելույթ է սուրբ Էջմիածնի և Հայոց Ընդհանրական Հայրապետության դեմ: Իրողությունները ամբողջապես շրջելով, Ամթիլիասի շարադրանքը փորձում է պնդել, թե՛

1. «Քաղաքական ու հատվածական ցկատառումներով» պայքար է մղվում Ամթիլիասի Աթոռի դեմ, սիյուրքի ազգային-եկեղեցական կյանքից ներս «նոր տարակարծություն և շփոթ ստեղծելու», այդ Աթոռն «անշքացնելու» և «պարզ վանահայրության մը վերածելու համար»:

2. «Կաթողիկոս Ամենայն Հայոց Մեծի Տաճկ Կիլիկիո» մակդիրի գործածությունը Կիլիկյան կաթողիկոսների կոնդակների սկզբնավորության մեջ «ունի իր անցյալը»:

3. Ամթիլիասի գաղաղակները «այդքան նվիրական և պատմական հիշատակ մը չեն կրնար և արտոնված սլ չեն ջնջել», հետևաբար, «թող այս մասին ո՛չ ոք վեճ քանա, ո՛չ խոսքով և ո՛չ ալ գրչով, զուր է, անտեղի է, անխմաստ է»:

Խմբագրությունս չի կարող խեղաթյուրումով շարադրված այս գրության կողքով անցնել:

Ինչպես հայտնի է մեր ընթերցողներին, Մայր Աթոռի դիվանը իր նոյեմբեր 30 1973 թվակիր պաշտոնական հայտարարության մեջ («Էջմիածին» ամսագիր, 1973, նոյեմբեր, էջ 30), հանուն Ամենայն Հայոց Հայրապետի, իր դիրքը ճշտել էր շեշտելով, այս առթիվ,

1. Թե՛ «Ամթիլիասի Տաճկ Կիլիկիո» դիվանի վերջերս հրապարակած անթվակիր շարադրանքը, ի մասին «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսի գործածության, փարիսեցիաբար խմբագրված մի փաստաթուղթ է, որ մի անգամ ևս քղազերծում է այդ Աթոռի այժմու պատակտիչ ոգին՝ ընդդեմ Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի»:

2. «Պատմությունից հայտնի է, թե վերոհիշյալ շարադրանքի մեջ հիշատակված մի քանի ապօրինությունները մեր եկեղեցու կողմից մերժված և դատապարտված արարքներ են եղել, արարքներ, որոնցով լուր տեղական

իրավասություններ ունեցող կիլիկյան գահակալներից ոմանք, միլվաձ ստորա-կայության բարդություններից, փորձել են երբեմն օգտագործել «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսը՝ հակադրվելով Հայոց Ընդհանրական Հայրապետության, որ ի ս. Էջմիածին, երբեմն էլ՝ ս. Երուսաղեմի ու Կ. Պոլսի պատ-րիարքություններին»:

3. «Ծատ ուշագրավ և ինքնին պերճախուս է, որ Անթիլիասի շարադրանքի մեջ հիշատակված կիլիկյան վեց գահակալների օգտագործած տիտղոսներից ոչ մեկը մյուսին չի նմանվում, տիտղոսներ, որոնք չեն օգտագործվել կիլիկյան մյուս կաթողիկոսների կողմից»:

4. Մայր Աթոռի դիվանի «Հայտարարություն»-ի մեջ հարց է տրվում, թե «Անթիլիասի ներկա գահակալը ինչո՞ւ է հետևում մի քանի օրինազանց կիլիկյան կաթողիկոսների օրինակին և չի հետևում նույն Աթոռի օրինազանց կաթողիկոսների օրինակին, որոնք ճնշող մեծամասնություն են կազմում»:

5. «Անցյալում կատարված մի քանի անկարգություններ երբեք չեն կա-րող արդարացնել նոր անկարգություններ»:

6. «Անթիլիասական շարադրանքի մեջ սպրդած է, սակայն, մի ճշմարիտ դատողություն, այն է՝ «...յուրաքանչյուրը իր պատմական տեղը և իր ծառայության կալվածը և դերը ունի»: Այո՛, այդպես էլ պե՛տք է լինի: Որով, Մայր Աթոռս հրավիրում է կիլիկյան Աթոռը, որ հարգի այս սկզբունքը, թե՛ կաթողիկոսական տիտղոսի օգտագործման և թե՛ իրավասությանը սահմանների տեսակետից՝ ի սեր վերականգնման մեր մայր եկեղեցու միության և ներքին խաղաղության:

Այդպես նրա խոսքը, առանց գործի, մնում է կեղծ ու մեռյալ»:

7. «Անթիլիասի հրապարակած նոր այս շարադրանքը գալիս է մի անգամ ևս ապացուցելու, թե ս. Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսության հանդեպ նա անշեղ կերպով մնում է հակաթոռի դիրքերի վրա»:

Արժան և իրավ:

«Ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսի ապօրեն օգտագործումով, Անթիլիասի Աթոռը և Տ. Տ. Խորեն կաթողիկոսը մի անգամ ևս հրապարակով հակադրվում են ս. Էջմիածնին ու Ամենայն Հայոց Հայրապետության՝ նոր, ծանր կացություններ ստեղծելու համար սփյուռքի հայ եկեղեցու ծոցում մեր ժամանակի այս փափուկ պայմաններում, երբ թուրքս այնքան կարիքն ունենք ներքին խաղաղության և միության վերականգնման:

Հակապատմական և հակականոնական է կիլիկիայի կաթողիկոսներից ոմանց անվան վրա «Ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսի հավելումը, ինչպես նաև «հավասարազորության նորարույս տեսությունը, որով փորձ կրլլա հայ եկեղեցին և նվիրապետությունը վերածելու երկզխանի մարմնի մը, Անթիլիասի Աթոռը հավասարազոր նկատելով Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռին և «Ամենայն Հայոց» տիտղոսը ավելցնելով կիլիկյան կաթողիկոսի անունին», գրում է Հայոց Հայրապետը 1968 թվականի հոկտեմբեր 21 թվակիտ նամակում Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսին («Էջմիածին», 1970, № 2—Է, էջ 16):

Խմբագրությունս անհրաժեշտ է գտնում անդրադառնալ Անթիլիասի դիվանի նոր շարադրանքին և մատենագրական վկայություններով ու պատմական փաստերի հիման վրա ցույց տալ, թե ի՞նչ է «Տանն Կիլիկիայի կաթողիկոսությունը», ի՞նչ են նրա տեղն ու իրավասության սահմանները հայ եկեղեցու նվիրապետության ծոցում և ինչո՞ւմ է կայանում Անթիլիասի շարադրանքի մեջ առաջ քաշված սխալ և մերժելի՝ տեսության հակապատմականությունն ու հակականոնականությունը:

ՍԱԶԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԻՆԿՑԱՆ ԱԹՈՒԽ

Մեր եկեղեցից հանդուրժել է պատմական դեպքերի բերումով և ժամանակի պարտադրանքով, տեղական ինքնավարության վրա հիմնված մասնավոր կաթողիկոսական երկու Աթոռների՝ Աղթամարի (1116—1895) ու Սսի (1446-ից ըստ մ) գոյությունը, որոնք, սակայն, անկախ միավորներ չեն եղել, այլ անբաժանելի մասերը հայ եկեղեցու նվիրապետության կառույցի: Այս Աթոռներից յուրաքանչյուրի իրավասությունը տարածվել է իրեն համար սահմանված թեմերի վրա: Եվ ամեն անգամ, երբ տեղական այդ Աթոռներից մեկը փորձել է դուրս գալ իր սահմաններից, այդ քայլը համարվել է միշտ որպես բացահայտ հերձվածող հակակառնական արարք և դատապարտվել:

1441 թվականին ս. Էջմիածնում գումարված օրինավոր ազգային-եկեղեցական սրբազումար ժողովի 800 պատգամավորների միաձայն որոշումով և «եկեղեցական կանոններու և ազգային իրավունքներու հիման վրա» (Մաղաքիա արքեպ. Օրմանյան, «Ազգապատում», Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 2108) Հայրապետական Աթոռը Սսից փոխադրվեց իր ընկ և պատմական կենտրոնը՝ ս. Էջմիածին, որտեղից հետագեւ էր 484-ին, երբ «Սիս՝ Կիլիկիո երբեմնի շքեղ մայրաքաղաքը այլևս որևէ հրապույր չուներ կեդրոն մը ըլլալու համար Ամենայն Հայոց կաթողիկոսության» (Բաբգեն Եսթոնսկից կաթողիկոս. «Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո», Անթիլիաս, 1839, էջ 1127). որովհետեւ «ժողովուրդը գաղթած և պանծալի մայրաքաղաքը իսլամ բռնությանց ներքև ճգնված էր և չէր կրնար կեդրոն ըլլալ Ամենայն Հայոց կաթողիկոսության» (Բաբգեն կաթողիկոս, անդ, էջ 1188) և «Կիլիկիո մեջ ընդհանրապես և մասնավորաբար Սսի մեջ կատարյալ ուղակիզում մըն էր կաթողիկոսներուն պաշտոնավարությունը, կործանյալ և հայությունն գրեթե թափուր մայրաքաղաքին մեջ» (Բաբգեն կաթողիկոս, անդ, էջ 1210): Ահա այդ ախտը օրերին, Հայրապետական Աթոռի ս. Էջմիածին փոխադրությունից հինգ տարի հետո, 1446-ին, ոմն Կիրակոս քահանա, «երեց մի աշխարհիկ», ըստ վկայության ժամանակակից պատմիչ և դեպքերի ականջալուր և ականատես Թովմա վարդապետ Մեծոփեցու, «վասն հակառակության» ...«դիմեաց առ ամիրայն Կիլիկիոյ, որ էր ընդ իշխանութեամբ Սուլտանին Եգիպտոսի, խոստացեալ վճարել նոս ամի ամի երեք հարիւր դեկան և էառ ի նման գիշխանութիւն կաթողիկոսութեան Սսոյ» (Հ. Մ. Չամչյան, «Հայոց պատմություն», Վենետիկ, 1784, հար. Գ, էջ 481):

ԺԷ դարի ժամանակագիր Գրիգոր վարդապետ Դարանաղեցի (1578—1643, «Ժամանակագրութիւն», Երուսաղեմ, 1914, էջ 310), նույնպես վկայում է, որ Կիլիկիայի մի քանի եպիսկոպոսներ որոշել էին բաժանվել ս. Էջմիածնից և «եղին իւրեանց ինքնագլուխ կաթողիկոս», մինչ Հայրապետական Աթոռի ս. Էջմիածին փոխադրվելուց հետո ազգի և եկեղեցու կամքով և որոշումով Սսում «նոր կաթողիկոս մը պիտի չընտրվեր, քանի որ անդին Էջմիածնի մեջ կաթողիկոսական Աթոռը վերահաստատված էր և նոր կաթողիկոս մը ընտրված և կերևի թե ոչ միայն ինքն Մուսաբեկյան (Սսում նստած վերջին Ամենայն Հայոց կաթողիկոսը (ծնթ. խմբ.)), այլ նաև Կիլիկիո եկեղեցականությունը ունեին ա՛յդ հասկացողությունը» (Բաբգեն կաթողիկոս, անդ, էջ 1213):

Եվ ահա 1446 թվականին, «վասն հակառակության» ընդդեմ Էջմիածնի և «վասն սպաստամբութեան» ընդդեմ Ամենայն Հայոց Հայրապետության, որ ի ս. Էջմիածին, Սսում ևս տեղեկվում էր հակաթոռ մի կաթողիկոսություն:

Որով Կիլիկյան այս կաթողիկոսությունը իր սկզբնավորումով փաստական «հերձվածող կաթողիկոսություն» էր և կանոնական գետնի վրա՝ հակաթուրքություն, և երբեք իրավական ճանաչման չի արժանացել Մայր Աթոռի և կամ ազգային-եկեղեցական որևէ ժողովական որոշումով:

Հետագայում, սակայն, Մայր Աթոռը և Հայաստանյայց եկեղեցին ու ազգը, ժամանակի տիրող քաղաքական որոշ պայմանների քերտումով, պարզապես հանդուրժել են այդ անկարգությունն ու հակաթուրքությունը, այն լքելով, որ «ժամանակը քերավ և ժամանակն ալ կտանի... Սիսը... հակաթուրքության կերպարանքի ներքև սկսավ, բայց օրինավորության կերպարան առած է, սկիզբեն իրեն դեմ վճիռ չտրվելովը...» (Օրմանյան, ամդ, էջ 2444—2445):

Կիլիկյան կաթողիկոսների պատմությունը գրող Բարզեն կաթողիկոսը ևս, քննության առնելով Սսի կաթողիկոսական Աթոռի կանոնականության հարցը, գրում է.

«Կիլիկիո կաթողիկոսական Աթոռին կանոնականությունը պաշտպանելու համար միշտ պատմական սխալ բացատրություններ և փաստեր ստաջ քաշված են անկախ՝ թե՛ նույնիմջն Կիլիկիո հին և նոր կաթողիկոսներու կողմեն և թե՛ Կիլիկիո Աթոռը պաշտպանել ուզողներու կողմեն ընդդեմ աղոր հակառակ էջմիածնի կաթողիկոսներուն և ընդդեմ նաև անոնց ջատագույններուն...»

Անոնք որ ըսին Կիլիկիո Աթոռը ուղղակի ս. Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսական գիծին շարունակությունն է կամ Շնորհալիի կաթողիկոսության հաջորդությունը, այսպիսիները տարակույս չկա որ տույզ պատմությունն ալելի պատմական դեպքերու երևույթներով ոգևորվեցան. վասնզի Լուսավորչի կաթողիկոսության շարունակությունը, բառին կանոնագիտական առումով, եթե տեղի հետ կապվի, էջմիածնեն դուրս պետք չէ ելլե. իսկ եթե կաթողիկոսական իշխանության փոխանցումի իմաստով պիտի առնվի շարունակությունը, այդ պարագային բոլոր կաթողիկոսներն ալ, որ Լուսավորչի կաթողիկոսության հաջորդության շղթան կկազմեն, օրինավոր կաթողիկոսներ են, առանց կապվելու տեղվո և ժամանակի:

...Պատմության այս լույսերուն տակ Կիլիկիո կաթողիկոսությունը աշխարհագրական և տեղագրական առումներով չի կրնար Շնորհալիի հաջորդությունը ըլլալ, որովհետև Սիս չէ եղած Շնորհալիի նստոցը» (Բարզեն կաթողիկոս, ամդ, էջ 17, 18):

Կիլիկյան Աթոռի գահակալներից ոմանք դժբախտաբար չեն ունեցել հայ եկեղեցու նվիրապետական կարգ ու սարքի, կանոնական դրության գիտակցությունը և «փառասիրությունից» մղված փորձել են դուրս գալ իրենց իրավասությունների շրջանակից, մոռանալ իրենց Աթոռի իշխանության սահմանները և ձգտել են իրենց ազդեցությանը ենթարկել Մայր Աթոռի թեմերը, «Սսի Աթոռը փայլեցնելու նպատակով և այն նորեն Ամենայն Հայոց Աթոռ դարձնելու համար» (Օրմանյան): Նման արարքներ համարվել են բացահայտ հակակառնական և դատապարտվել: «Բազում իրօք» աշխատել են Կիլիկյան Աթոռի օրինազանց գահակալները «խափանել զկաթողիկոսութիւնն էջմիածնայ», բայց հանդիպելով Մայր Աթոռի, Կ. Պոլսի հայոց պատրիարքության, ազգային-եկեղեցական իշխանությունների և ժողովրդի բուռն հակահարվածին և զգալով, որ «ոչինչ կարեն և խալաղութիւն երկուց Աթոռոց ևս վրդովի, դադարեցան ի ջանիցն անտի» (Հ. Մ. Չամչյան, ամդ, էջ 491):

«Էջմիածնի մեծ Աթոռույն և այդ մասնավոր Աթոռոց մեջ խնդիր պետք չէ լինի, քանի որ պաշտոնապես Աղթամարա և Սսո կաթողիկոսունք հանձն առին նախամեծար գահն ու Ամենայն Հայոց Աթոռույն գլխավորությունը

ճանչնալ... եթե երբեք Ադրամարա և Սոո կաթողիկոսներն ոմանք հաստատյալ պայմանաց և կարգադրությանց անաստեցին, իրենց գործը կմնա անձնական գործ. եկեղեցական և իրավասական կանոնը անխախտ կմնան և ոմանց զանցառության մեջ» (Մաղաքիա արք. Օրմանյան, «Աթոռ Հայաստանյայց», Վաղարշապատ, 1886, էջ 72—73):

Մայր Աթոռի հաղորդագրության մեջ ճիշտ և հստակ ասվել է.

«Անցյալում կատարված մի քանի անկարգություններ երբեք չեն կարող արդարացնել մեր անկարգությունները»:

«Եվ այս կետին վրա,—ավելացնում է Բաբգեն կաթողիկոսը,—կիլիկիայից իրավունք չուցեին, որովհետև իրաց վիճակը փոխված էր քուրդովին: Էջմիածին Մայր Աթոռ ճանջված էր և ան իրավունք ուներ պահանջել Կիլիկիո Աթոռեն, որ իր սահմաններն անդին չանցնի» (Բաբգեն կաթողիկոս, անդ, էջ 313):

ԿԻԼԻԿԻԱՆ ԱԹՈՐԻ ՕՐԻՆԱԶԱՆՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ

Այժմ մի քանի խոսք Անթիլիասի շարադրանքի մեջ հիշատակված կիլիկյան մի քանի կաթողիկոսների մասին, որոնք ապօրեն կերպով օգտագործել են «Կաթողիկոս Ամենայն հայոց» տիտղոսը:

Այդ օրինագանց կիլիկյան կաթողիկոսներից առաջինը եղել է Սիմեոն Սեբաստացին (1637—1648), որը փորձել է դուրս գալ իր իրավասության սահմաններից և իր իշխանությունը տարածել Կիլիկիո սահմանակից՝ Մայր Աթոռի թեմերի և հայաբնակ վայրերի վրա, ու որպես մի տեսակ «արդարացում» իր մեր անկարգությամբ, Փիլիպպոս Աղբակեցի (1638—1655) Ամենայն Հայոց Հայրապետին գրած իր թղթի սկզբնավորության մեջ քննադատորեն գործածել է «Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Ամենայն Հայոց, պատրիարք սրբոյ Աթոռոյն Երուսաղեմայ» տիտղոսները (Բաբգեն կաթողիկոս, անդ, էջ 315):

Փիլիպպոս կաթողիկոսն իր պատասխան թուղթը, որպես «Ընդհանրական ճամակ և քարտեզ» ուղղում է «առ ամենայն արմենակոչ խումբսն, որ յաշխարհս Կիլիկիա, ի Սիս և ի Բերիա քաղաքի», այսինքն Կիլիկիայի ամբողջ ժողովրդին և հոգևորականությանը. և որի մեջ ձեռնհաստրեն և կորովյա ճախանձախնդրությամբ պաշտպանում է Մայր Աթոռի գերագահությունն ու տիրախնամ թեմերը՝ եզրակացնելով, որ «մասունքն (իմա՝ կիլիկյան Աթոռը) ի հանուրն (իմա՝ Ամենայն Հայոց Հայրապետության մեջ) տեսանին, բայց ոչ հանուրն ի մասունս ... ս. Էջմիածինն առաջ է, և Սիսն՝ վերջին, ս. Էջմիածինն գլուխ է, Սիսն՝ մասունք»:

Մալ. արքեպ. Օրմանյանը Սիմեոն Սեբաստացու հակականոնական այս դիրքը իրավաքիորեն գնահատում է որպես «կիլիկեցիներու հավակնոտ մեծամտության մերթ ընդ մերթ երևան եկող հայտարարություն, որ հերքվելու իսկ պետք չունի, զի պատմական պարագաները շատ որոշ են այդ մասին» (Օրմանյան, «Ազգապատում», Բ, էջ 2447):

Այնուհետև երկու Աթոռների կանոնական հարաբերությունները բարելավվում են 1651 թվականին Երուսաղեմի ժողովում, որը գումարվում է Ջատկից հետո ս. Հակոբյանց մայրավանքում, Ամենայն Հայոց կաթողիկոս Փիլիպպոս Աղբակեցու հրախնդրով և նախագահությամբ, և որին մասնակցում են Սսի Ներսես Սեբաստացի կաթողիկոսը (1648—1654), որը, որպես խոհանր և հեռատես մարդ, զգույն էր, որ հնարավոր չէր իր նախորդի՝ Սիմեոն Սե-

բաստացու հակաթոռ մտայնությամբ և մեթոդով կարգադրել վիճելի հարցերը, Երուսաղեմի Աստվածատուր պատրիարքը, 7 եպիսկոպոսներ, 18 վարդապետներ, 85 կրոնականներ, 80 քահանաներ և մեծ թվով իշխաններ և ժողովրդական ուխտավորներ՝ մոտավորապես 1000 հոգի:

Երուսաղեմի ժողովը պատմական մեծ իրադարձություն էր հայ եկեղեցու այդ ժամանակի պատմության մեջ նրանով, որ առաջին անգամ կանոնական գետնի վրա քննության էր առնվում Սսի կաթողիկոսության իրավասության հարցը «ընդհանուր ազգային հավանությամբ» (Օրմանյան, անդ, էջ 2457):

Երուսաղեմի ժողովի գլխավոր նպատակն է եղել՝ վերացնել երկու Աթոռների միջև անհասկացողություններն ու հակասությունը, «սէր և միաբանություն» հաստատել Մայր Աթոռի և Սսի միջև. «Հանուր ժողովն գումարեալ եկեղեցականք և աշխարհականք... միաբանութեամբ խոնարհեցան ի հրամանս Հայրապետին Փիլիպպոսի և հատատեցին կանոնական բանս երեքտասան գլուխ» (Առաքել Դավրիժեցի, «Պատմություն հայոց», Վաղարշապատ, 1896, էջ 250):

Ինչպես երևում է Դավրիժեցու վկայությունից, Երուսաղեմի ժողովի որոշումները կամ կանոնագիրը ստորագրում են երկու կաթողիկոսները, Երուսաղեմի պատրիարքը և ժողովի մյուս մասնակիցները ու տաճում իրենց հետ՝ որպես պատմական-կանոնական կարևոր փաստաթուղթ՝ նրանով առաջնորդվելու համար հետագայում, որպեսզի Սսի Աթոռի կողմից նոր անկարգություններ չպատահեն հայ եկեղեցու ծոցում:

Երուսաղեմի այս պատմական ժողովի որոշումների լույսի տակ հետակորեն երևում է դատապարտումը Սիմեոն Մեքատուացի կաթողիկոսի ոտնձգությունների ու տիտղոսամոլության:

Դժբախտաբար հետագայում էլ, հակառակ Երուսաղեմի ժողովի կանոններից և ոգուց, Սսի գահակալներից ոմանք դարձյալ փորձում են ոտնձգություններ կատարել Ամենայն Հայոց Հայրապետության իրավասության սահմանների մեջ և օգտագործել «Ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսը: Այսպես օրինակ՝ Միքայել Աջապահյանը (1737—1758), ոտնահարելով Էջմիածնի և Սսի միջև կայացած սիրո և միության կանոնական դաշինքը, «ձգտում ունեցած ըլլա յոր իրավասության սահմանները ընդարձակելու, Էջմիածնի հպատակ վիճակներեն մաս մը իրեն վրա դարձնելով, մանավանդ որ բոլոր տաճկահայոց կաթողիկոս ճանչցվիլ կուզեր» (Օրմանյան, «Ազգապատում», Բ, էջ 8070):

Սիմեոն Երևանցի Ամենայն Հայոց կաթողիկոսը (1763—1780) իր հույսն էր Զամբո գրքում երկու անգամ հիշատակում է Սսի այս հակաթոռ Միքայել Աջապահյան կաթողիկոսին՝ որպես Էջմիածնական թեմերից ներս ոտնձգություններ կատարողի. «Նոյնպես և յառաջն արարին օրհնեալ իշխանքն մեր (ակնարկում է Կ. Պոլսի ամիրաներին—ծնթ. խմբ.), որք ձաճակցեալք արքունական հրովարտակա հանին զնա (Միքայելին) ի քաղաքէն և ի վիճակէն Էջմիածնի զի մի ես կոխեսցէ զվիճակս սրբոյ Էջմիածնի կաթողիկոսն Սսոյ» («Զամբո», Վաղարշապատ, 1873, ԺԲ, էջ 88):

Կ. Պոլսի պատրիարքները և ամիրաները հետագայում էլ երբեք քաջալեր չեն համարիսացել Սսի գահակալներից ոմանց նման ոտնձգություններին, երբ փորձել են նրանք կանոնական, վարչական շփոթ ստեղծել եկեղեցու կյանքում: Նման դեպքերում Սսի օրինազանց կաթողիկոսներին «սաստիկ հանդիմանական գրեր գրվեցան», վկայում է Մատթեոս Նախկապու իզմիրլյանը

(«Հայրապետություն Հայոց և Աղթամար և Սիս», Կ. Պոլիս, 1880, էջ 480—500):

Հատկանշական է արձանագրել, որ Կիլիկյան Աթոռի օրինագանց կաթողիկոսները երբ փորձել են նման հակակառնական ոտնձգություններ կատարել ս. Էջմիածնի թեմերի մեջ, նրանք սկսել են գործածել «Ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսը, արդարացնել ջանալով իրենց անկարգ արարքները:

ՊԱՋԵԼ ՍԻՍԸ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՐ

ԺԹ դարի 60-ական թվականներին Սսի Աթոռը շատ է զբաղեցնում Մայր Աթոռն ու Կ. Պոլսի հայոց պատրիարքությունը՝ իր անկարգ գործունեությամբ:

1863 թվականին սկսած Արևմտյան Հայաստանում մեր ազգային-եկեղեցական կյանքը դեկավարվում էր, ինչպես ծանոթ է, Ազգային Սահմանադրությամբ:

Ազգի և եկեղեցու ցանկությունն էր, որ ամենուրեք իշխեն օրենքն ու իրավունքը, պարտքն ու պարտականությունը:

Հատկապես շատ տխուր պատկեր էին ներկայացնում, ըստ ժամանակակիցների վկայության, Սսի և Աղթամարի Աթոռները իրենց «աճուր և աճխիղճ գայլակություններով, որոնք գործվեցան մոտ ատեններս երկու մասնավոր կաթողիկոսությանց թեմերուն մեջ, Ռալթամար և ի Սիս, անարժան, և իսպառ անարժան եկեղեցականաց միջոցով» (Դպիրյան, անդ, էջ 631):

Կ. Պոլսի Պողոս Բ Թագաթյան պատրիարքը Գևորգ Դ Ամենայն Հայոց կաթողիկոսին և ներկայացնում «Աղմաթարա և Սսո խնդիրները ի տնօրինություն»:

Քանի որ Ազգային Սահմանադրության մեջ չէին հիշված Աղթամարի և Սսի Աթոռները, Ամենայն Հայոց կաթողիկոսի հրամանով Կ. Պոլսում 1867-ին կազմվում է եկեղեցական մի մասնաժողով, որը պատրաստում է լվեց հոդվածներից բաղկացած մի կանոնադրություն՝ մի անգամ ընդմիջտ կարգ ու կանոն հաստատելու համար Աղթամարում և Սսում:

Գևորգ Դ-ը հաստատում է այդ կանոնագիրը և այն հանձնում Կ. Պոլսի պատրիարքին և Ազգային Վարչության ի գործադրություն:

Ըստ այդ կանոնադրության Աղթամարի և Սսի կաթողիկոսների ընտրությունը ենթարկվում է Ամենայն Հայոց կաթողիկոսի վավերացման և հաստատման, իսկ նրանց օծումը դարձյալ կատարվում է Ամենայն Հայոց Հայրապետի ձեռքով: Սսի կաթողիկոսը համարվում է «Կիլիկիո թեմակալ առաջնորդաց գլուխ» և կամ «Վանահայր վիճակավոր»: Ամենայն Հայոց կաթողիկոսը միայն իրավունք ունի ստորագրել Կաթողիկոս Ամենայն Հայոց, իսկ Սսի և Աղթամարի կաթողիկոսների կոնդակների վերտառությունը պետք է լինի Կաթողիկոս Տաճն Կիլիկիո, Կաթողիկոս Տաճն Աղթամարա, իսկ ստորագրությունը՝ Կաթողիկոս Սսի, Կաթողիկոս Աղթամարի:

Սսի և Աղթամարի Աթոռների համար կազմված այս կանոնադրության առթիվ Տ. Բաբգեն կաթողիկոսն անում է հետևյալ խորհրդածությունը.

«Ամենքն հարմար առիթն էր ասիկա ազգային պատրիարքարանի համար, որ կորուվով գործեր, հեցած Սահմանադրության և ցույց տար Թուրքիո հայոց մեջ գոյություն ունեցող Աթոռներուն թե ալլևս կարելի չէր հին մտայնությամբ և կերպերով գործել» (Բաբգեն կաթողիկոս, անդ, էջ 677):

Այնուհետև Կ. Պոլսի ազգային ընդհանուր ժողովը, 1870-ից սկսած, զբաղվում է բազում անգամներ Աղթամարի և Սսի հարցերով:

Ազգային ընդհանուր ժողովը արձանագրում է՝ «Ս. Էջմիածնի Հայրապետը ս. Գրիգոր Լուսավորչի հաջորդն է և գերագառությունն ու սուրբ Հայց. ս. եկեղեցվո կառավարության իրավասությունը անորն է, իսկ Այլթամարա և Սսո թեմական կաթողիկոսներն եկեղեցական անհշխանությունեն ծագած են և ապօրինավոր»:

Ազգային ընդհանուր ժողովի մի այլ նիստում Գրիգոր Օսյանն իր արտասանած պատմական ճառի մեջ արտահայտելով բոլոր ժողովակույցների մտածումներն ու զգացումները հստակորեն նշում էր. «Ի՞նչ է այս Սսո կաթողիկոսության խնդիրը, ի՞նչ է իր նշանակությունը, տարածումը, հետևանքը: Ջայլ իմանալու համար տեսնենք նախ թե ի՞նչ է Էջմիածնա կաթողիկոսությունը: Էջմիածնա կաթողիկոսությունը համայն ազգին, թե ի Թուրքիա, թե ի Ռուսիա, Պարսկաստան, Հնդկաստան և մինչև ի ծագս աշխարհի ուր հայ մը կա, բոլոր հայերուն կաթողիկոսն է ու հոգևոր գլուխը.... Մեծ և ազգային պատճառ մը կա Էջմիածնա հարելու համար. Էջմիածնա կաթողիկոսը միայն հոգեվոր գլուխն է, որ Ռուսիո հայերը միացուցած է և կրնա միացնել Թուրքիո հայերուն հետ: Եթե Էջմիածնա կաթողիկոսը մեր ալ կաթողիկոսն չլլա, ազգին երկու մեծ հատվածները կրածնվին իրարմե:

Հիմա տեսնենք թե ի՞նչ է Սսո կաթողիկոսը... Սսո կաթողիկոսը ուրիշ քան չէ, այլ Էջմիածնա կաթողիկոսին հակառակ աթոռը: Թող ուրանա ով որ կուզե իր այս հատկությունը. պատմությունը քարձրածայն կհուշակե զայն: Հակառակաթոռ, ուրեմն ապստամբ է... անպատվություն մը ազգին ու եկեղեցվուն. ուրեմն պետք է վերցնել զայն... Չէ՛, պետք է պահել Սսո կաթողիկոսությունը, և գիտե՛ք ինչու համար.— Էջմիածնա կաթողիկոսության համար: Եթե Սսո կաթողիկոսությունը վերցնես, մեծ վնաս կհասցնես Էջմիածնա կաթողիկոսության»:

Սահմանադրական սերունդը Կ. Պոլսում, Օսյանի քանաձևումով, Սսի Աթոռը սկզբունքով հակաթոռ նկատելով հանդերձ, մտածում էր, որ նրա գոյությունը կարելի է պահպանել այն դեպքում, երբ այդ Աթոռը օգտակար լինի ս. Էջմիածնի Մայր Աթոռին: Այս ոգով, այո՛, Կ. Պոլսո ազգային ժողովը պահպանեց Սսո Աթոռը, քայց ամեն անգամ որ այդ Աթոռը փորձեց իր սահմաններից դուրս ելնել, կամ ինչ որ չափով հակադրվել Մայր Աթոռ ս. Էջմիածնին, նույն ազգային ժողովը կարգի հրավիրեց Սսո Աթոռը և պարտադրեց չխախտել օրինականությունը:

1871 թվականին Նրիմյան պատրիարքի նախագահությամբ գումարված ազգային ընդհանուր ժողովի որոշումով պատրիարքարանում կազմվում է մի այլ հանձնաժողով, որը մշակում է 7 հոդվածներից կազմված մի ծրագիր՝ «Ծրագիր հարաբերությանց Կիլիկիո կաթողիկոսական վիճակին, ըստ ազգային կեղծեմական վարչության» անունով, որպեսզի Ազգային Սահմանադրությունը տրամադրության և Ազգային Կենտրոնական Վարչության տնօրինության համաձայն կատարվի Սսի նոր կաթողիկոսի ընտրությունը:

Սսի «ամենապատիվ» կաթողիկոսին հրամայվում է «յամենայն վերնագիրս կոնդակացն և յամենայն գրութիւնս ստորագրել Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, ընդ օմին ի քաց թողոյ զգործածութիւն մանուշակագոյն վեզարի և տարականոն ստորագրութիւն» (Իզմիրլյան, էջ 1887):

Ազգային Վարչությունը և Կ. Պոլսի պատրիարքարանը 1871-ին Սսի Մկրտիչ Բիֆուիզյան կաթողիկոսի ընտրությունը հաստատելու համար նրա առաջ պայման են դնում «խոստումնագրով մը ընդունիլ ազգային ընդհանուր ժողովի ընելիք կարգադրությունը կիլիկյան Աթոռին ու ազգային պատրիար-

քարանձի հարաբերությանց մասին, որպեսզի ճշտվի Կիլիկիո Աթոռին ու Կ. Պոլսի պատրիարքարանձի հետ հարաբերության կերպը, ուրիշ խոսքով ազգային պատրիարքարանձի ե Մայր Աթոռի գերիշխանությունը Կիլիկիո Աթոռի վրա» (Բաբգեն կաթողիկոս, անդ, էջ 715—716):

Հանուն Ազգային Կենտրոնական Վարչության, Խրիմյան պատրիարքը իր 1872 թվի մարտ 10 թվակիր պաշտոնական գրությամբ տեղեկացնում էր Ամենայն Հայոց կաթողիկոսին, թե Կ. Պոլսի ազգային երեսփոխանական ժողովը և վարչությունը բարձր են պահել Մայր Աթոռի գերագահության սկզբունքը, «առջևն առած են Հայց. ս. եկեղեցվո միության և միասնության սպառնացող վտանգին, Ստ աճկախության սպառնացող դիրքը օրինավոր սահմաններու տակ մտցնելով, ապագայն իսկ ապահովելու հաջողած է», որովհետև, ավելացնում է Գևորգ Դ-ին ուղղված պաշտոնագիրը, «երբ կաթողիկոսն իր խոստումնագիրը դրժե և սահմանելի հարաբերությունը չընդունի և կամ նոցա դեմ վարվի, անտարակույս անքաստանության տակ կիյնա և ի պահանջել հարկին՝ մինչև անգամ կդադրի յուր պաշտոնեն» (Իզմիրլյան, անդ, 937—941):

Այս պայմանների ներքո է ընտրվում Մկրտիչ Քեֆսիզյանը, բայց ընտրությունից հետո դժուր է իր խոստումը և իր անկարգ ընթացքով «ի դերև հանցե համաձայնության ամեն փորձ» և փորձեց «խզել կասերը Մայր Աթոռի և ազգային պատրիարքարանձի հետ» (Բաբգեն կաթողիկոս, անդ, էջ 728, 1219):

Քեֆսիզյանի մահից հետո Սսի Աթոռը 8 տարի (1894—1902) թափուր է մնում: Մայր Աթոռի, Կ. Պոլսի պատրիարքարանձի և «բովանդակ հայության» սենեյալ մտահոգությունը զամված էր Կիլիկիո Աթոռի խնդրին և Կիլիկիո ժողովուրդի կացության» (Օրմանյան, «Ազգապատում», Գ, էջ 5189), որովհետև կառավարության գլխավոր նպատակն էր ձգձգել ընտրությունը, սրել ընտրական պայքարը փառամոլ եկեղեցականների միջև, Կիլիկիո Աթոռը հակադրել Մայր Աթոռին ու Կ. Պոլսի պատրիարքարանձին և «Հայ ազգությունը երկուքի բաժնել և Կիլիկիո համար նոր հայ ազգություն մը կազմել» (Օրմանյան, Գ, էջ 5810): Այս ձևով հայ «ազգությունը երկուքի կբաժնվեր և Կիլիկիո համար նոր հայ ազգություն մը կկազմվեր» (Բաբգեն կաթողիկոս, անդ, էջ 777):

Վերջապես 1902 հոկտեմբերի 12-ին ընտրվում է Սահակ եպս. Խապայանը, որպես կաթողիկոս Սսի:

Ազգային Վարչությունը ընտրական գործողությունները գտնելով օրինավոր, հաստատում է այդ ընտրությունը, այն մտածումով, որ պատրիարքարանձի կողմից նախապես Կիլիկիո Աթոռին փոխանցված «պայմանագիրը ընդունելի և գործադրելի ճկատված է Խապայանի կողմն» (Օրմանյան, «Ազգապատում», Գ, էջ 5807):

Խրիմյան Հայրիկը ս. Էջմիածնից շնորհավորում է Խապայանի ընտրությունը:

1903 թվականի ապրիլի 20-ին Սուրբ կատարվում է Խապայանի օծումը: Իր մատուցած առաջին ս. պատարագների մեջ Խապայանը հիշում է Խրիմյան Հայրիկի անունը որպես բնդհանրական Հայրապետի: Իր անդրանիկ կոնդակում Խապայանը դարձյալ հիշում է Ամենայն Հայոց Հայրապետին, հորդորում է սուրբել «վասն կենաց եպիսկոպոսապետին Հայկազանց՝ Հայրապետին Ամենայն Հայոց և նախամեծար Աթոռոյ Արքայ Էջմիածնի» և հույս է հայտնում, որ երկու Աթոռների միջև մի շարք խնդիրների պատճառով ա-

ռաջ եկած անհասկացողությունները կվերանան սիրով և միաբանությամբ: (Բաբգեն կաթողիկոս, անդ, էջ 846):

Սակայն, պատրիարքարանի և խապայանի միջև շուտով ծագում է դարձյալ «Աթոռի խնդիր մը, և ամոր հաջորդեց իրավասության խնդիր մը, որում ի պատասխան ... 18 հոդվածներն բալկացած գիր մը հանձնվեցավ Սահակ կաթողիկոսին» (Բաբգեն կաթողիկոս, անդ, էջ 885), որի երկու հոդվածները վերաբերում էին ս. Էջմիածնի և Սսի Աթոռի հարաբերություններին, իսկ մյուս հոդվածները շոշափում էին Կ. Պոլսի պատրիարքարանի, Ազգային Կենտրոնական Վարչության և Սսի Աթոռի հարաբերությունները: Այս առթիվ Օրմանյան պատրիարքը խապայանցի մի ընդարձակ նամակ է գրում «իբրև հեճակետ ունենալով այն սկզբունքը, թե հայությունը մեկ եկեղեցի է, և մեկ կեդրոն ու գլուխ կրճա ունենալ, որ է Էջմիածինը, և տաճկահայությունը մեկ ազգ է ու մեկ կեդրոն ու գլուխ կրճա ունենալ, որ է Կ. Պոլիսը, որով Սիսը երկու տեսակետով ալ պետք էր երկրորդական ճակատվեր և առաջնության ձրգտումներ չուենար, որպեսզի եկեղեցվույն և ազգին բաժանման առիթ ալած չլլար» (Օրմանյան, Գ, էջ 5308):

Օրմանյան պատրիարքին գրած իր 1906 թվականի մարտ 21 թվակիր և 1907 թվականի փետրվար 26 թվակիր նամակներով Սահակ կաթողիկոս խապայանը «Սուրբական խնդիրներում կխառներ ճան Կիլիկիո եպիսկոպոսներում Էջմիածնական վիճակաց մեջ ազատորեն պաշտոնավարելու և Կ. Պոլսո պատրիարք ընտրվիլ կարենալու կետերը, հսկառակ նույնիսկ Ազգային Սահմանադրության» (Օրմանյան, Գ, էջ 5310):

Սահակ կաթողիկոս խապայանց էր, որ փորձեց իր մի շարք կոնդակներում «օրինականացնել» «եպիսկոպոսապետ և կաթողիկոս Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիո» տիտղոսի գործածությունը:

1907 թվականի փետրվար 26 թվակիր նամակով խապայանը այս մասին գրում էր Օրմանյան պատրիարքին. «...իսկ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑԻ Կիլիկիո Աթոռին վրա փոխադրույլ մենք չենք, այլ մեզմե առաջիները, ուստի այդքան նվիրական և պատմական հիշատակ մը ջնջել Մեր իրավասություններեն շատ վեր է: Ապահով թող լլլա Պատկ. Վարչությունը, որ ՈՉ ԱՄԵՆԱՅՆ, ՀԱՅՈՑԻ և ՈՉ Կիլիկիո ՏԱՆ ՄԵՇ մակդիրը, կրճան Մեր մեջ այն հավակնությունը հառաջ բերել, կարծելու համար թե Մայր Աթոռո Հայրապետը ընդհանրական լլլալու իրավունքեն կապտված է, հետևաբար թյուրիմացություն ստեղծելու փափաքողներուն տված մեկնությունը Մեզ համար կարեվորություն և նշանակություն չունի» (Բաբգեն կաթողիկոս, անդ, էջ 906):

Օրմանյան պատրիարքի, Կ. Պոլսի Ազգային Վարչության և Մայր Աթոռի միջև ծագած այս հարցերի առիթով, որպես Գերագույն Դատավորի և Վերադիտողի, խապայանը դիմում է պաշտոնապես ճան Խրիմյան Հայրիկին «ասոր օգնությամբ և հեղինակությամբ Կ. Պոլիս Ազգային Վարչությունը ճնշելու: Խրիմյան սակայն չէր կրճար եկեղեցական կանոններեն և ազգային պահանջներեն հեռանալ, մանավանդ որ խապայան չէր քաշված նույնիսկ Մայր Աթոռը վիրավորող կետեր առջև դնել... Եվ հարկավ այս էր պատճառը, որ խապայանի դիմումները անպատասխան կմնային» (Օրմանյան, Գ, էջ 5314):

1907 թվականի ապրիլի 28-ին Խրիմյանը վերջապես պատասխանում էր խապայանին և թելադրում՝ չհետևել «Սնափառ և ոչ էական խնդրոց և վեհաճոցներամբ նայել յարտաքին ձևակերպութիւնս ... պաշար մղել միայն ընդդէմ վնասաբեր խոչընդոտաց», աշխատել «դաստիարակութեան հայ մանկւոյն, բարձրացուցանել զբարոյական անկեալ վիճակ ժողովրդեան գա-

ւառաց և լուսաւորել զմիտս նոցա, և համերաշխ եղբայրութեամբ կենցաղութարի» (Կիլիկիո կաթողիկոսության վերաբերյալ պատճեններ 4 եր. 54, նաև Օրմանյան, Կ, էջ 5314—5315):

ԿԻԼԻԿԻԱՆ ԱԹՈՒՐ ԱՆԹԻՒՆԱՍՈՒՄ

Կիլիկյան Աթոռից ներս, ի շահ եկեղեցու և հայ ժողովրդի, օրինականություն և կարգ ու կանոն հաստատելու Մայր Աթոռի, Կ. Պոլսի պատրիարքարանի և Ազգային Կենտրոնական Վարչության ջանքերը ընդհատվում են երկրում տիրող 1908—1917 թվականներին քաղաքական, ուլթերգական վերիվայրումների հետևանքով, ինչպիսիք էին Ադամյայի կոտորածը 1909-ին, Առաջին համաշխարհային պատերազմը 1914-ին, Ապրիլյան եղեռնն ու տարագրությունը 1915-ին և Թուրքիայում Ազգային Սահմանադրության վերացումը:

1921 թվականին դատարկվում էր Կիլիկիան հայ ազգաբնակչությունից: Սահակ կաթողիկոսն էլ «ամդարձ մեկնեցավ Ադամայեն» (Բարզեն կաթողիկոս, անդ, էջ 274): Կիլիկյան Աթոռը դարձավ գաղթական ու թափառական: Սսի Աթոռը կորցրեց իր ոտքի տակի հողը: Օրակարգի վրա էր դրված Սսի Աթոռի լինել և չլինելու հարցը: Չկար Կիլիկիան: Ի՞նչ պետք է լիներ հսկատագիրը կիլիկյան Աթոռի:

1928 թվականի փետրվարին Սահակ Խապայան կաթողիկոսը գրում է իր «Կտակ»-ը, որն իրապես «կտակ մը ըլլալն ալելի Կիլիկիո կաթողիկոսության տնականության մղձախանջն էր» (Բարզեն կաթողիկոս, անդ, էջ 895):

Կային մարդիկ, որոնք մտածում էին, թե Կիլիկիայից դուրս իմաստ չունի պահել կիլիկյան Աթոռը և «ավելորդ է Կիլիկիո կաթողիկոսությունը Սյուրիո մեջ, քանի որ Երուսաղեմի հայ պատրիարքությունը, իբրև դարավոր Աթոռ, կրնա ինքն ստանձնել Սյուրիո հայության եկեղեցական գործերու ղեկավարությունը» («Սիոն», 1929, էջ 132):

Ուրիշներ, որոնց թվում նաև Սահակ կաթողիկոսը, ավելի կանոնական էին գտնում կիլիկյան Աթոռի միացումը «Ընդհանրական Հայրապետության»: Կային նաև ուրիշներ, որոնք «քանավոր ու օրինական կգտնեին աթոռակցի մը օծումը» («Կտակ»):

Այդ ծանր օրերին կիլիկյան պանդուխտ Աթոռի գոյության և տնականության մտահոգություններով էր զբաղված նաև Մայր Աթոռը:

1924 թվականից Գևորգ Ե-ի և Սահակ կաթողիկոսի միջև սկսվում է թղթակցություն կիլիկյան Աթոռի Սիրիայում և կամ Լիբանանում վերահաստատման միջոցառումների մասին: Սահակ կաթողիկոսը անհրաժեշտ էր գտնում այդ մասին իմանալ Ամենայն Հայոց Հայրապետի «իմաստուն տեսությունը և Գերագույն հոգևոր խորհրդի կարծիքը» («Էջմիածին», 1968, № Ա, էջ 34):

Մի շարք նամակագրություններից հետո կիլիկյան Աթոռի վերահաստատման հարցով 1928 թվականի դեկտեմբեր 25 թվակիի նամակով Մայր Աթոռը, հանուն Ամենայն Հայոց Հայրապետի, լիազորում է եգիպտահայոց առաջնորդ և Մայր Աթոռի նվիրակ տ. Թորգոմ արքեպ. Գուշակյանին՝ զննել Երուսաղեմ և անձամբ տ. Եղիշե Դուրյան պատրիարքին հանձնել Գևորգ Ե-ի պաշտոնական գրությունը՝ «իմանալու նորա անձնական կարծիքը ու զեկույնելու Վեհափառ Հայրապետին, ... ի նկատի ունենալով միայն Սիրիայի հա-

յության ազգային-կրոնական, եկեղեցական-վարչական գործերի կազմակերպումը ու վարչաձևի միությունը» («Էջմիածին», 1968, № Ա, էջ 85):

Նույն օրը և նույն հարցի շուրջ Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալ տ. Խորեն արքեպիսկոպոսը, Ռաճուն Գևորգ Ե-ի, գրում է Երուսաղեմ՝ տ. Ն-ի շրջան Կատրիարք Դուրյանին, որ «մենք միանգամայն սնճրածեշտ և անհետաձգելի ենք համարում Սիրիո հայոց թեմերի շուտավույթ և լավ կազմակերպումը»: Նույն նամակում թելադրվում էր, ըստ Սահակ կաթողիկոսի՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին կատարած խնդրանքի, որ «Երուսաղեմի առեմուսպատիվ պատրիարքը հաճեր Բեյրութի մատույր հարակից տեսչական բնակարանով և Դամասկոսի եկեղեցին առժամանակյա մեզ հանձնել»: («Էջմիածին», ամդ, էջ 85):

Այս առթիվ Սահակ կաթողիկոսը երախտագիտությամբ գրում էր Մայր Աթոռ՝ Վիլիկիո և Երուսաղեմի Աթոռներում եղբայրական համաձայնությունը միայն սրբազան Հայրապետի օրհնալիք միջնորդությամբ գլուխ կրճա գալ» («Էջմիածին», ամդ, էջ 84):

Այնուհետև Մայր Աթոռի հանձնարարությամբ 1929 թվականի ապրիլի 30-ին Երուսաղեմ է մեկնում տ. Թորգոմ արքեպիսկոպոսը «Դուրյան պատրիարքին հանձնելու համար Մայր Աթոռեն հղված կարևոր գրություններ Կիլիկիո կաթողիկոսության Սյուրիո մեջ կազմակերպումը դյուրացնելու» և Երուսաղեմապատկան եկեղեցիները «առժամանակյա» կերպով կիլիկյան Աթոռին հանձնելու համար (Ա. Ալպոյաճյան, «Թորգոմ պատրիարք Գուշակյան», Կահիրե, 1940, էջ 488):

«Երբ Երուսաղեմ հասա,—գրում է Թորգոմ արքեպ. Գուշակյանը,—այդ հարցերը կարգադրված էին արդեն Ամենայն Հայոց Սրբազնագույն Հայրապետին փափաքին համաձայն» («Սիոն», 1928, էջ 160):

Այս ձևով վերակազմվում էր կիլիկյան Աթոռը Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ և ջանքերով և համագալսի օժանդակությամբ:

Ուղեցիկն մի պահ կանգ առնել կիլիկյան Աթոռի Սիրիայում և ապա Լիբանանում վերահաստատման պատմության վրա, ցույց տալու համար Աթոռի խառնուրդի ճիշտ շարադրանքի զրպարտչական բնույթը: Ըշմարտությունն այն է, որ Մայր Աթոռը երբեք չի պայքարել Սսի Աթոռի և նրա գահակալների դեմ և երբեք չի ցանկացել անջնջանել այդ Աթոռը և այն վերածել «պարզ վանահայրության»:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը 1968 թվականի նոյեմբեր 21 թվակիր Տ. Տ. Խորեն կաթողիկոսին գրած Իր նամակում շեշտում էր. «Այստեղ գուցե հիշենք ավելորդ անգամ մը ևս, թե Մայր Աթոռը երբեք չէ մտածած և չի մտածեր որևէ չափով տկարացնել կիլիկյան Աթոռը կամ սահմանափակել անոր իրավասությունները և ներքին ինքնավար դեկավարությունը: Մենք անշեղ կերպով կհետևենք մեզ մախորդող Հայրապետներու օրհնակին և կհարգենք ձեր Աթոռին իշխանությունը Լիբանանի, Սուրիո և Կիպրոսի թեմերում վրա» («Էջմիածին», 1970, № 2—Է, էջ 16):

ԱՆԹԻԼԻԱՍՆ ԱՅՍՕՐ

Տեսնում ենք ահա, թե ինչպես սահմանադրական սերունդը իր ժամանակին, այնպես էլ Մայր Աթոռն ու Ամենայն Հայոց Հայրապետը այսօր, մտածում են նույն ձևով. «Սսի կաթողիկոսը պետք է մնա իբրև կաթողիկոս, այլ որչափ կարելի է, պետք է վերճա իբրև հակառակաթոռ: Ոչ միայն վա-

սրնգի գայթակղությունն ու սնուստությունն մրն է, այլև վասնզի օր մյս վտանգավոր կրնա ըլլալ» (Իզմիրյան, աճդ, էջ 828—842):

Այսօր, սակայն, Անթիլիասը կիլիկյան Աթոռի անունով, ճիշտ հակառակ ուղղությամբ է գործում, այսինքն, վնասակար լինում Մայր Աթոռ ու Էջմիածնին, ամեն կերպ փորձում է հափշտակել Մայր Աթոռի թեմերը, փորձում է քանդել սփյուռքի հայության հոգեկան կապը ս. Էջմիածնի հետ և տկարացնել նրա հեղինակությունը արտասահմանի մեր պանդուխտ ժողովրդի հոգևոր-ազգային գիտակցության մեջ: Նույն Անթիլիասը փորձում է նաև գործել Մայր Աթոռի հեղինակության դեմ, միջեկեղեցական-միջազգային կյանքում:

Այո՛, դժբախտաբար, այսօր Անթիլիասի Աթոռը վնասակար է դարձել հայ եկեղեցու և հայ ժողովրդի համար, իր անկարգ արարքներով, իր պառակտիչ հակազգային գործունեությամբ: Անթիլիասի հրապարակած վերջին շարադրանքը անհերքելի մի մոր ապացույց է այդ վնասարեք քաղաքականության հետապնդման:

Ի տես այս ողբերգական վիճակի հայ հավատացյալը մղվում է հարց տալու՝ իճշո՛ւ այս բոլորը: Մինչև 1956 թվականի դրությամբ ու վիճակով Անթիլիասի Աթոռը իճշո՛ւ էր սահմանափակված և իճշ չափով իրավազորված կամ անջքացած, որ հետո, իբրև անհրաժեշտություն, նա փորձեր իր իշխանությունը տարածել Մայր Աթոռի թեմերից ներս՝ պառակտյալ իրավիճակ ստեղծելով սփյուռքի գրեթե ամբողջ տարածքի վրա: Ո՛ւ իճշ շահեց Անթիլիասի այս վերջին սարիների օրինազանցություններից: Եվ արդյոք խելքը գլխին հայ մարդ կա՞, որ այս իրավիճակի մեջ տեսնի իրապես կիլիկյան իսկ Աթոռի շահը: Անթիլիասը փաստորեն կտրում է այն ճյուղը, որի վրա ինքն էլ կանգնած է:

Ուրեմն, 1956 թվականից սկսած, Անթիլիասի կիլիկյան Աթոռը ուրիս գալով «իր ավերից», այսինքն՝ տեղական Աթոռի իր համգամանքից, դարձյալ սկեկոծեց մեր եկեղեցին ու ժողովուրդը:

Ծանոթ են 1956 թվականից սկսած Անթիլիասի տագնապի խաղալ ու դրական լուծմանը նվիրված Մայր Աթոռի և անձամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ջանքերը, հորդորները, խաղաղասիրական կոչերն ու հաշտության առաջարկները, որպեսզի Անթիլիասի Աթոռը մնա իր սահմանների մեջ, իր հոգևոր, ազգային առաքելության բարձրության վրա և իր օգտակար նպաստը բերի մեր ժողովրդի հոգևոր սպասին հայ եկեղեցու նվիրապետության ծոցում, օրինականության և համերաշխ գործակցության պայմաններում:

Մանավանդ 1963 թվականի հոկտեմբերի 26-ին Ներուսալեմի ողջագործումով Մայր Աթոռը գերագույն ապացույցը տվեց իր բարի կամեցողության և իր լավատեսության, ընդառաջելով Անթիլիասի պահանջին, որ Տ. Տ. Խոբենն աթոռակալին կաթողիկոսական ճանաչում տրվի առանց պաշմանի:

Ներուսալեմի ողջագործումով Մայր Աթոռը հույս ուներ, որ մոր էջ կբացվի մեր ազգային-եկեղեցական կյանքում՝ պատմականորեն նվիրագործված իրավասությանց սահմանների հարգումով, և այդ ողջագործումը կարմատաճա մեր կյանքում ու կղաղնա հոգևոր միության, եկեղեցական և ազգաշեն գործունեության խաբիսի:

Ավա՛ղ, սակայն, մոր հուսախաբություններ էին սպասում Մայր Աթոռին: Անթիլիասի Աթոռը և անձամբ նրա արդի գահակալը 1963 թվականից անմիջապես հետո անկարգ ու պառակտիչ մոր արարքներ գործեցին, որոնց հե-

տեվանքով «սաղ երկաթի մը հպումը զգացիմք մեր սրտին մեջ». գրում է Վենամուտ Հայրապետը պատկերավոր արտահայտությամբ, գործեր, որոնք միաժամանակ «զույն գլխի կզարնվին Երուսաղեմի ողջագործման ոգու հետ և նոր դուռ կբանան երկաթառակության և խոտվության»:

Արդարև, 1989 թվականից հետո, Անթիլիասի այդ անկարգ գործերից ելան:

1. Տ. Տ. Նսրեն կաթողիկոսի կողմից անթիլիասական մի եպիսկոպոսի նշանակումը Մարսելի թեմում, սուսնց Ամենայն Հայոց Հայրապետի գիտության և համաձայնության:

2. Երկու Աթոռների հավասարագործության նորարարյա մի տեսության հրապարակումը:

3. «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսի գործածությունը:

4. 1985 թվականի Կիլիկյան Աթոռի նոր կանոնադրության մեջ 32 և 39 հոդվածների ներմուծումը:

5. Ունեցություն Կարսկասի հայ համայնքի ծոցում:

6. Ամենայն Հայոց Հայրապետի վճռով կարգադրվ արված մի ուստադրուծ քահանայի վերականգնումը և քահանայության պաշտոնի կոչվելը Անթիլիասի իշխանության ներքո:

Ահավասիկ հեռանալը Անթիլիասի գահակալի՝ Երուսաղեմում տված հանդիսավոր խոստումների:

Այս պայմաններում որքան անհամոզիչ է հնչում Անթիլիասի խոսքը հայ եկեղեցու ներքին միության, եղբայրության և սիրո մասին, երբ մյուս կողմից գործնապես նա ճիշտ հակառակ ուղղությամբ է գործում: Անթիլիասի խոսքը, սակայն, «առանց գործի մնում է կեղծ և մեղայ»:

ՄԵՐ ՕՐԵՐԻ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆԸ

Այսօր մեր պանդուխտ ժողովրդի հիմնական հարցը, մեր ժամանակների հրամայականը, մեր եկեղեցու ներքին միության և նվիրապետական բոլոր Աթոռների միջև համերաշխ գործակցության վերահաստատման հարցն է, որպեսզի հայոց սուրբ եկեղեցին իր ազգապահպանման պատմական առաքելությունը կարողանա շարունակել միացյալ ճիգերով և առավել արդյունավորությամբ:

Անթիլիասը, վերջին տարիների իր մակերեսային և անհեռատես քաղաքականությամբ, արգելակում է այդ առաքելությունը:

Բոլոր նշմարիտ հայերը քաջ գիտեն, որ համայն ազգի գերագույն սրբությունը Մայր Աթոռ սուրբ Էջմիածինն է, ամուր խարսխված հայրենի հողի վրա, Արարատի դիմաց, ս. Լուսավորչի իսկ ձեռքով: Ո՛վ շահ է որոնում այդ սրբության զգացումը տկարացնելու մեջ:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի օրհնության ներքո, սփյուռքում հայ եկեղեցու նվիրական առաքելությունն է մանավանդ այսօր, հայությունը հա՛յ պահել, փրկել նրան մոլորեցուցիչ ազդեցություններից ու դարձնել նրան մի ամրակուտ, միասնական ամբողջություն իբրև եկեղեցի:

Այդ նվիրական աշխատանքը հնարավոր կլինի, այո՛, առավել արդյունավորությամբ կազմակերպել, եթե հարգվի մեր եկեղեցու նվիրապետական կառույցի մեջ օրինական միության սկզբունքը և եթե վերականգնվի ավանդական կարգապահությունը և համերաշխ գործակցությունը նվիրապետական Աթոռների միջև:

Միայն այսպիսի պայմանների մեջ Անթիլիասի Աթոռը, պահելով իրեն լիբրապահված տեղը, դիրքը և իշխանության սահմանները հայ եկեղեցու նվիրապետական կառույցի մեջ, պիտի կարողանա իր շինարար, օգտակար առայնությունը կատարել, հոգևոր և ազգային իմաստով:

Այս ցանկալի և օրինական իրավիճակին հասնելու համար է, որ Ամենայն Հայոց Հայրապետը իր 9 հոկտեմբեր 1972 թվակիր նամակում հորդորում էր Անթիլիասի գահակալին, որ անդրադառնա ցարդ կատարված սխալներին, և հարգվեն հետևյալ առաջադրանքները.

Ա.—Անթիլիասի կիլիկիո կաթողիկոսության Աթոռը ընդունի կանոնական և պատմությամբ նվիրագործված Հայաստանյայց եկեղեցու միության սկզբունքը, հոգևոր վերին իշխանության (ներքո Ամենայն Հայոց կաթողիկոս-Պատրիարքի:

Բ.—Անթիլիասի կիլիկիո կաթողիկոսության Աթոռը հարգի հայ եկեղեցու նվիրապետական Աթոռների իրավասությանց սահմանները:

Գ.—Անթիլիասի կիլիկյան Աթոռը հանձն առնի Մայր Աթոռ ս. Էջմիածնի իրավասության վերադարձնել Իրանի, Հունաստանի և Միացյալ Նահանգաց թեմերը և Կարակասի համայնքը:

Դ.—Միջեկեղեցական կազմակերպությունների և համաժողովների մեջ միայն եկեղեցին ճերկայացվի միացյալ մի պատվիրակությամբ:

Ե.—Անթիլիասի կիլիկյան Աթոռը հարգի սկզբունքը, որ Ամենայն Հայոց կաթողիկոս-Պատրիարքի պատճառով կամ կարգալուծման վճիռները վերջնական են և պարտադիր հայ եկեղեցու նվիրապետական բոլոր Աթոռների և թեմերի համար:

Անթիլիասը պետք է իսպառ հրաժարվի «Ամենայն Հայոց կաթողիկոսություն» լինելու իր հավակնություններից ու մտնի հայ եկեղեցու օրենքի և կարգի ձիրքի մեջ, մտնի հայ եկեղեցու իսկական, կանոնական միության մեջ: Դրանով նա ավելի՛ կզորանա, Է՛լ ավելի լայն չափով իր նպաստը կթերի մեր եկեղեցու հոգևոր սպասին և ազգի ծառայության գործին:


Այն դեպքում և ա՛յս պայմաններում, այո՛, Մայր Աթոռի գլխավորությամբ, բովանդակ հայությունը բարոյապես, նյութապես գորավիզ կկանգնի կիլիկյան Աթոռին:

Այն ձևով և միայն ա՛յս ձևով Անթիլիասը կարող է արդարացնել իր գոյությունը հայ եկեղեցու նվիրապետության ծոցում՝ հավատարիմ մնալով իր իսկ օրինապահ գահակալներին:

Մայր Աթոռը, Հայոց Հայրապետը ա՛յդ է, որ կպահանջեն Անթիլիասի Աթոռից: Եվ այդ ո՛չ միայն անհրաժեշտ է, այլ նաև հնարավոր և ցանկալի:

«ԷԶՄԻԱՇԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ





ԱՄԱՆՈՐԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Ամանորը խիճդ ու ուրախություն է քերտւմ մարդկանց, ցնծության արթունք սփռում բոլոր սրտերին:

Կյանքի այս տոնի նկատմամբ անտարբեր չի մնում նաև Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

Արդեն ավանդույթ է դարձել Մայր Աթոռի միաբանության, պաշտոնեության և հոգևոր ճեմարանի ուսանողական և դասախոսական կազմերի համար Նոր տարին դիմավորել միասին, ինչպես նախանշելի համերաշխություն ունեցող մի ընտանիք, հոգևոր ճեմարանի հարկի տակ:

Այս տարի մույնպես չի խախտվում այդ ավանդույթը:

Տոնականորեն զարդարված դահլիճը սպասում է Հայոց Հայրապետի օրհնաբեր ժամանումին:

Ժամը 20-ին, խանդավառ ծափողջույնների մեջ, դահլիճ է մտնում Վեհափառ Հայրապետը և օրհնում Մայր Աթոռի քարիքներով զարդարված Ամանորի սեղանը: Հայոց Հայրապետի կողքին տեղ են գրավել Գերագույն հոգևոր խորհրդի և Մայր Աթոռի միաբանության անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը:

Հնչում է Հայաստանի պետական հիմնը:

Ամանորյա շնորհավորական սրտագին խոսք է ասում հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Արիս Ծ. վրդ. Ծիրվանյանը՝ հանուն հոգևոր ճեմարանի շնորհավորելով Հայոց Հայրապետի Նոր տարին ամենաջերմ քաղաքացիականությամբ և շնորհակալությամբ

հայտնում հայրապետական այն հոգածության և գուրգուրանքի համար, որոնցով Ն. Ս. Օծությունը շրջապատել է հոգևոր ճեմարանը՝ որպես իր սրտի մոտ կրթական-հոգեվոր հաստատություն:

Ապա տեսուչ վարդապետի հրավերով խոսք է առնում Հայոց Հայրապետը՝ Ամանորի առթիվ իր պատգամը և օրհնությունը տալու Մայր Աթոռի միաբանությանը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին և ուսանողությանը՝ թելադրելով, որ ամկոտրում հավատքով և լավատեսությամբ շարունակեն ծառայել ամենայն հայոց սրբությունը սրբոց Մայր Աթոռ ս. Էջմիածին, մեր վերածնված մայր հայրենիքին և հայ ժողովրդին, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի, հոգևոր-եկեղեցաշեն ու հայրենազվեր նոր աշխատանքներով՝ ի պայծառություն մեր սուրբ եկեղեցու, ի քարօրություն հայրենյաց և ի խաղաղություն աշխարհի:

Հայոց Հայրապետն իր հավատքի և լավատեսության սրբազան կրակով խանդավառում և ոգեշնչում է բոլոր ներկաներին՝ նվիրումով իրենց աշխատակցության բաժինը քերելու համար Մայր Աթոռի հոգևոր, մշակութային, կրթական, վաճառական-վերանորոգչական ու կազմակերպչական հետագա բոլոր աշխատանքներին, ինչպես նախորդ տարիներին:

Այնուհետև հոգևոր ճեմարանի ուսանողության անունից Հայոց Հայրապետին ուղղվալ շնորհավորական և որդիական ե-

րախտագիտության խոսք է ասում Գ լսարանի ուսանող վաչե սրկ. Նալբանդյանը:

Վեհափառ Հայրապետի սլաոգամով և զրհնության խոսքով ավարտվում է հանդեսի Ա մասը:

Սեղանի օրհնությանը սկսվում է Ամանորի ճաշկերույթը և հանդեսի Բ՝ գեղարվեստական մասը, որը ղեկավարում է հոգևոր ճեմարանի ավագ վերակացու Սարգիս սրկ. Սարգսյանը:

Ընդհանուր խանդավառության մեջ Մայր Աթոռի հարատևման և Վեհափառ Հայրապետի կենաց արևջատության համար առաջին և միակ բաժակը բարձրացնում է տ. Հուսիկ եպս. Սանթրյանը: Բոլորը հոտընկարս միանում են այդ առաջարկին բարեմաղթություններով:

Հանդիսության հոգևորությունն ավելացնում են հոգևոր ճեմարանի սաները՝ ղեկավարությամբ եվրոպական երաժշտության դասախոս Խորեն Մեխյանեջյանի՝ երգելով «Գարուն Երևան» և «Սեղանն է առատ» երգերը:

Այս Գ լսարանի ուսանող Գրիգոր սրկ. Զմրուխտյանը կարդում է Ամանորի տոնի սուրճի գրված զվարթ ու մերթ դիպուկ բանավոր կաղանդչեքերը:

Հոգևոր ճեմարանի «Զվարթնոց» էստրադային նվագախումբը կատարում է մի շարք ուրախ երգեր:

Այնուհետև հանգչում են դահլիճի բոլոր

լույսերը, և խորհրդավոր մթության մեջ շարքով մերս են մտնում Գ լսարանի ուսանողները, վառված մոմերը ձեռքերին, ու տեղ գրավում երգեհոնի մոտ՝ անգլերեն լեզվով կատարելու համար Խճնդյան մի քանի երգեր:

Սարկավագներից մեկն ընթերցում է Ղուկասի Ավետարանից Քրիստոսի ծննդյան պատմությունը (Բ 1—20):

Ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը, մի անգամ ևս շնորհավորելով բոլոր ճեռկաների Նոր տարին, հրաժեշտ է ասնում և մեկնում:

Ճեմարանի հարկի տակ շարունակվում է խինդն ու ուրախությունը, մինչև կեսգիշեր, ժամը 12-ը:

Նոր տարի է արդեն: Գիշերվա լուռության մեջ 365 անգամ դողանջում են Մայր տաճարի զանգերը՝ ավետելով Հայոց աշխարհի վրա արևածագը նոր օրերի:

Մայր Աթոռի միաքաններն ու ուսանողները բարեպաշտ երկյուղածությամբ մտնում են Մայր տաճարից ներս, համբուրում Իջման ս. սեղանը, կատարում իրենց ուխտն ու աղոթքը և միաբերան արտասանում Տերունական աղոթքը, «Պահապան ամենայնի»-ն և երգում «Տէր ողորմեա»-ն:

Աղոթքով և Ամանորի խոհերով լիցքավորված ուսանողները վերադառնում են հոգեվոր ճեմարան՝ շարունակելու համար Նոր տարվա ուրախությունները:





Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ Ո Ւ Մ

Հունվարի 1-ին, երեքշաբթի.—Գ օր Ծը-
նդնդեան պահոց: Կաղանդ, տարեմուտ.

Այսօր Մայր տաճարում, Ամանորի առի-
թով, ս. պատարագ է մատուցում տ. Մուշեղ
վրդ. Պետիկյանը:

Պատարագի ավարտին Նոր տարվա խոր-
հրդի և ճշմանության մասին լավագույն
խորհրդածություններով և քարի մաղթանք-
ներով քարոզում է Մայր տաճարի լուսարա-
րապետ տ. Հուսիկ եպս. Սամթուրյանը:

Այնուհետև Իջման ս. սեղանի առաջ, Վե-
հափառ Հայրապետի հանդիսադրությամբ,
կատարվում է Հայրապետական մաղթանք:

Եկեղեցական արարողություններից հետո
Վեհափառ Հայրապետը թափոթով առաջ-
նորդվում է Վեհարան, ընդունում Մայր Ա-
թոռի միաբանությանը և հոգևոր ճեմարանի
ուսանողությանը:

Մայր Աթոռի միաբանության անուհից դի-
վանապետ տ. Արսեն եպս. Բերքերյանը
շնորհավորում է Վեհափառ Հայրապետի Ա-
մանորը և մաղթում Նորին Ա. Օծությանը
քաջառողջություն, արևշատություն և ազգ-
օգուտ ու եկեղեցաշեն մորամոր ձեռնար-
կումների յիակատար հաջողություն:

Ապա Վեհափառ Հայրապետը փոխա-
դարձաբար շնորհավորում է Մայր Աթոռի
միաբանության Նոր տարին, օրհնում ազգն
ու եկեղեցին, քաղեմադրում քարոզություն
Հայոց աշխարհին և խաղաղություն՝ մարդ-
կությանը:

Այնուհետև բոլոր ներկաներն աջահամ-
բույրով ստանում են Վեհափառ Հայրապե-
տի օրհնությունը:

Հունվարի 5-ին, ուրբաթ.—Ամանորի և ս.
Ծննդյան տոների առթիվ պատարագելու,
հանին կենաց քարոզությամբ հավատացյալ-
ներին մխիթարելու համար, հաքու մեկնեց
տ. Եզնիկ արք. Պետրոսյանը:

Հունվարի 7-ին, երկուշաբթի.—Բ օր
Ծննդեան: Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է
մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մա-
րուքյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է
հոգեհանգստյան կարգ՝ «լուսն համօրէն
ննջեցելոց»:

Հունվարի 10-ին, հինգշաբթի.—Ամանորի
և ս. Ծննդյան տոների արձակուրդներից հե-
տո, այսօր, հոգևոր ճեմարանում վերսկսվում
են դասավանդությունները:

Հունվարի 11-ին, ուրբաթ.—Այսօր, երե-
կոյան ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետի
նախագահությամբ, Երևանի հայրապետա-
կան վիլլայում տեղի է ունենում Գերագույն
հոգևոր խորհրդի հերթական նիստը:

Հունվարի 18-ին, կիրակի.—Ը օր Ծննդե-
կան: Տօն անուանակոչութեան Տեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի:

Մայր տաճարում ս. պատարագ է մատու-
ցում տ. Մասիս արդ. Գալստյանը:

Հունվարի 14-ին, երկուշաբթի.—Տօն
Ծննդեան ս. Յովհաննու Կարապետին:

Մայր տաճարում ս. պատարագ է մատու-
ցում տ. Գուրգեն քնն. Աշուրյանը:

Հունվարի 15-ին, երեքշաբթի.—Այսօր, ա-
ռափոխյան ժամը 11-ին, Երևանում, Հայաս-
տանի գիտությունների ակադեմիայի նիստե-
րի դահլիճում, բացվում է ս. Ներսես Ծնոր-
հալու մահվան 800-ամյակին նվիրված գի-
տական նստաշրջանը՝ համատեղ մասնակ-
ցությամբ Հայաստանի գիտությունների ա-
կադեմիայի, Երևանի պետական համալսա-
րանի և ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մա-
տենադարանի:

Նստաշրջանը ներածական խոսքով բա-
ցում է Հայաստանի գիտությունների ակա-
դեմիայի նախագահ, ակադեմիկոս Վ. Համ-
բարձումյանը:

Գիտական նստաշրջանը տևում է երկու
օր՝ հունվարի 15—16 օրերը:

Նստաշրջանում ընթերցվում են գիտական
լուրջ ու բազմաբովանդակ բնույթի արժե-
քավոր դասախոսություններ, ուսումնասիրու-
թյուններ՝ նվիրված ս. Ներսես Ծնորհալու
կյանքին, գործունեությանը, մատենագրա-
կան բազմաժանր և հարուստ ստեղծագոր-
ծությանը:

Հանուն Հայոց Հայրապետի և Մայր Աթոռ
ս. Էջմիածնի, գիտական սույն նստաշրջա-
նին ներկա են լինում Արարատյան թեմի ա-
ռաքնորդական փոխանորդ տ. Կոմիտաս
արքեպիսկոպոսը, Մայր Աթոռի դիվանա-
պետ տ. Արսեն եպիսկոպոսը, «Էջմիածին»
ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանը, Հա-
յաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական
հարաբերությունների բաժնի ընդհանուր
քարտուղար Պ. Ծահրազյանը, «Էջմիածին»
ամսագրի խմբագրության քարտուղար Եզ-
նիկ արք. Պետրոսյանը:

Խմբագրություն «Էջմիածին» ամսագրի
հաջորդ համարում հանգամանորեն կանդ-
րադառնա ս. Ներսես Ծնորհալու մահվան
800-ամյակին նվիրված գիտական սույն
նստաշրջանին:

Հունվարի 15-ին, երեքշաբթի.—Ամանորի
և ս. Ծննդյան տոների առիթով այսօր, Արա-
րատյան թեմի առաքնորդական փոխանորդ
տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանի
հրավերով, Վեհափառ Հայրապետը այցե-
լություն է տալիս Արարատյան հայրապե-
տական թեմին:

Վեհափառ Հայրապետին ողջեցում են
Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ
եպս. Սանթրոյանը, Մայր Աթոռի դիվանա-
պետ տ. Արսեն եպս. Բերբերյանը, «Էջմիա-
ծին» ամսագրի խմբագիր Ա. Հատիսյանը և
Հայաստանյայց եկեղեցու Միջեկեղեցական
հարաբերությունների բաժնի ընդհանուր
քարտուղար Պ. Ծահրազյանը:

Առաքնորդանիստ ս. Սարգիս եկեղեցում
Վեհափառ Հայրապետին դիմավորում են
Արարատյան թեմի առաքնորդական փո-
խանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը,
Երևանի եկեղեցիների հոգեւորներ և արժա-
նապատիվ հայրերը, թեմական խորհրդի ու
եկեղեցական վարչության անդամները և
հավատացյալ ժողովուրդը:

Ս. Սարգիս եկեղեցու խորանի առջև Վե-
հափառ Հայրապետն Իր աղոթքն է անում և
ապա օրհնում հավատացյալ ժողովուրդին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը հան-
գամանորեն հետաքրքրվում է ս. Սարգիս ե-
կեղեցու վերակառուցման աշխատանքնե-
րով, այցելում շինարարական բոլոր տեղա-
մասերը, գրուցում ինժեներների, վարպե-
տների և շինարարների հետ:

Ժամը 15-ին ս. Սարգիս եկեղեցու առաք-
նորդարանում, հանուն Արարատյան թեմի և
ի պատիվ Հայոց Հայրապետի, տրվում է
նաշխարհային, որին ներկա են լինում տ. Կո-
միտաս, տ. Հուսիկ և տ. Արսեն սրբազան-
ները, թեմական խորհրդի և եկեղեցական
վարչության հոգևորական և աշխարհական
ու Վեհափառ Հայրապետի շքախմբի ան-
դամները:

Սեղանն օրհնում է Վեհափառ Հայրապե-
տը:

Տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը, հանուն
Արարատյան թեմի ողջ հոգևորականության,
թեմական-եկեղեցական մարմինների և հա-
վատացյալ ժողովրդի, ջերմորեն ողջունում
է Հայոց Հայրապետի օրհնաբեր ներկայու-
թյունն ու քարի գալուստ մաղթում՝ շնորհա-
վորելով Նոր տարվա և ս. Ծննդյան տոնե-
րը:

Տ. Կոմիտաս արքեպիսկոպոսն ապա որ-
դիական մասնավոր երախտագիտություն և
շնորհակալություն է հայտնում Հայոց Հա-
յրապետին՝ Արարատյան թեմի հանդեպ Նո-
րին Ա. Օծույթյան ցույց տված հայրական հո-

գածության, մեծ ուշադրության և անմիջական ղեկավարության համար, որպեսզի այս տարվա վերջերին ավարտվեն ս. Սարգիս եկեղեցու հիմնական վերակառուցման աշխատանքները:

Ծաշկերույթի ընթացքում թեմական խորհրդի և եկեղեցական վարչության անդամներից շատերը, թեմական խորհրդի ատենապետ Մուշեղ Սերոբյանի գլխավորությամբ, շնորհավորում են Հայոց Հայրապետի՝ Նոր տարին և ս. Ծննդյան տոնը:

Հայոց Հայրապետի գոհունակության և օրհնության խոսքով ավարտվում է Նրա այցելությունը Արարատյան թեմին:

Հունվարի 17-ին, հինգշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 11-ին, Վեհաբանում Հայոց Հայրապետն ընդունում է՝ հունվարի 14—17 օրերին Երևանում ուղուցքների համաճարակագիտության հարցերին նվիրված Սովետական Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների մասնագետների խորհրդակցության մասնակիցներին:

Սովետական Միության պատվիրակությանը գլխավորում էր ՍՍՀՄ թժշկական գիտությունների ակադեմիայի փորձառական և կլինիկական ուղուցքաբանության ինստիտուտի դիրեկտոր Ն. Ն. Բլոխինը, իսկ ամերիկյան պատվիրակությանը՝ քաղցկեղի համաճարակագիտության բնագավառի խոշոր մասնագետ դոկտ. Մ. Շնայդերմանը:

Հարգարժան հյուրերը նախ եղան Մայր տաճարում, ծանոթացան եկեղեցական արվեստի թանգարանին:

Այնուհետև հյուր-գիտնականներին Վեհաբանում ընդունում է Հայոց Հայրապետը և չերմ գրույց ունենում նրանց հետ:

Պատվարժան հյուրերը հրաժեշտ են առնում Հայոց Հայրապետից և Մայր Աթոռից լավագույն տպավորություններով:

Հունվարի 17-ին, հինգշաբթի.—Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ (հին տոմարով), պատարագելու, Բանին կենաց քարո-

զությամբ հավատացյալներին մխիթարելու համար, Թբրիսի մեկնեց տ. Արսեն եպս. Բեռքերյանը՝ ընկերակցությամբ Վրեժ սրկ. Նաջարյանի և Վաչե սրկ. Նալբանդյանի: Նույն առիթով Ախալցխա մեկնեց տ. Բագրատ արդ. Գալստյանը, Ախալքալաք՝ տ. Կարապետ քհն. Գրյընյանը, Օրջոնիկիձե՝ տ. Նշան քհն. Բեյքերյանը՝ ընկերակցությամբ Հարություն սրկ. Սարգսյանի, Արմավիր՝ Հովսեփ սրկ. Հակոբյանը:

Հունվարի 19-ին, շաբաթ.—Այսօր, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը ներկա եղավ Երևանի Այ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի դահլիճում կազմակերպված հանդիսավոր նիստին, որը նվիրված էր Ժողովուրդների բարեկամության շքանշանը մեր հանրապետությանը հանձնելու հանդիսավոր արարողությանը:

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրոյանը և Արարատյան թեմի առաջնորդական վոխսնորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը:

Հունվարի 20-ին, կիրակի.—Ա. կիրակի գկհի Ծննդեան.


Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Հունվարի 27-ին, կիրակի.—Բ. կիրակի գկհի Ծննդեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Բագրատ արդ. Գալստյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը՝ «Որ կամիցի ի ձեռք առաջին լինել՝ եղիցի ամենեցուն ծառայ: Քանզի եւ Որդի մարդոյ ոչ եկն առնույ պաշտօն, այլ պաշտել» (Մարկ. Ժ 44—45) քննադատով:





ՆԵՐՍԵՍ Ծ. ՎՐԴ. ՊՈԶԱՊԱՆՅԱՆ

(Հոգևոր հովիվ Լոմոնոսի Ֆայոց ս. Սարգիս եկեղեցու)

ԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՍՈՒՍԻ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիսուս երեսուն տարեկան էր, երբ իր նրապարակային գործունեությունը սկսեց: Մանրամասնորեն չգիտենք, թե մինչև այդ տարիքը նրա կյանքն ինչպե՞ս է անցել: Ավետարաններն այդ մասին չեն անդրադառնում: Միայն Գուկասն է, որ այդ շրջանի մասին ավանդում է երկու արժեքավոր տեղեկություններ: Նախ ակնարկում է Հիսուսի ընտանեկան կյանքում ունեցած շնորհալի վարքին, ապա նկարագրում դեպի Երուսաղեմ ճանապարհորդությունը, ստաներկու տարեկան հասակում (Բ 40—51):

Հրեաները սովորություն ունեին Չատկի տոնին, տարին մեկ անգամ, ներկա գտնվելու Նրուսաղեմում կրոնական տոնակատարություններին: Չատկի մեծագույն ու ամենից կարևոր տոնն էր, և այդ պատճառով էլ շատ ժողովուրդ էր ուխտի գնում Երուսաղեմ: Պաղեստինի բոլոր կողմերից, մինչև իսկ Կիլիկիայի հեռավոր երկրներից երում-երում գնում էին դեպի Երուսաղեմ: Ընտանյարհի խոնջենքն ու տաղտուկներն ամուլում էին սրտահույլ սաղմոսներ երգելով (ՄԻԱ) բարեպաշտական խանդավառ արտահայտություններով և տաճարի փառքը վայելելու հեռանկարով: Այս բոլորը ոգեվորությամբ էին լցնում նրանց սրտերն ամեն քայլափոխին, երբ ավելի էին մոտենում

մայրաքաղաքին: Այսպիսի առիթներով է, որ ծնողները տանում էին նաև իրենց զավակներին, երբ վերջիններն իրենց պատանույան տարիքն էին թնայոխում, երբ ստաներկուամյա էին դառնում:

Հովսեփ ու Մարիամ նա ուրիշների նման Հիսուսի հանդեպ ունեցած իրենց պարտականության մեջ չեն յերանում: Ո՛ր գիտե, ինչպիսի՞ հրճվանքով էր լցվում Հիսուսի հոգին, երբ անցնում էր իր սննդավայրից դուրս գտնվող դաշտերից ու հովիտներից՝ ներկա գտնվելու համար հոգեպարզ արայություններին, որոնք իր մեջ յուսավորելու էին Գերագույն «Որդի մարդոյ»-ի կոչումը:

Չատկական տոնից յոթ օրեր էին անցել, Հովսեփ և Մարիամ բազմության հետ ուղեվորվում էին դեպի իրենց քաղաքը՝ Նազա-րեթ: Չափաբասներն իրար հետ էին քալում, իսկ փոքրերը խմբվում էին նրանց շուրջը, երբեմն հեռանում միմյանցից, նաև իրենց ծնողներից: Հովսեփն ու Մարիամը, իրենց որդու բարեհամբույր բնավորության վրա վստահ, նրանով սկզբից նեղ չուտ չէին հետաքրքրվում, երբ նրան իրենց շուրջը չէին տեսնում: Սակայն առաջին երեկոյան հանգրվանին իսկ, երբ Հիսուսը չէր եկել ծնողների մոտ, վրդովված և ահ ու դողով ելեր էր փնտրելու նրան ողջ քաղաքա-

մի մեջ և հուսահատ, նրան չգտնելով, վերադառնել էին Երուսաղեմ և ուր երեք օրվա փնտրտուքից հետո հանդիպել նրան տանուրում:

Սրբավարի արևելյան կողմում մի ժողովատեղի կար, ուր հասկալիում էին ռաբբիները պաշտամունքից հետո՝ սուրբ Գիրքը քննադատելու կրոնական, քաղաքական և ընկերային հարցերի շուրջ կարծիքների փոխանակություններ կատարելու համար հրապարակավ: Այսպիսի մի հավաքության ընթացքում է, որ ծնողները գտան Հիսուսին, որը հետաքրքրական խոսակցություններով, որը հարցերով ու պատասխաններով զարմացնում էր ս. Գրքին հմուտ վարդապետների հոգիները:

Երբ Մարիամ, իր խոսքը ծածկելու համար, թեթև մի հանդիմանություն էր անում նրան, պատահին խորհրդավոր քառերով պատասխանում էր՝ իր կոչման զգացումը ունենալով. «Ինչո՞ւ էիք ինձ փնտրում, չգիտեի՞ք, թե ես Հորս տանը պետք է լինեմ» (Դուկ. Բ 48): Նրա կյանքի առաջին տարիներից սկսած նրա հոգին, կրոնական տպավորությունների հանդեպ զգայուն, Աստուծո հետ հարաբերության ճանապարհը էր որոնում, որովհետև մեղքի ապակայնի, ազդեցությունների ազատ իր բնությունը որևէ մեկից ավելի նրան ընդունակ էր դարձնել այդ բանին: Վստահաբար Երուսաղեմի ճանապարհորդությունն իր մեջ էլ ավելի պայծառացրել էր այդ հոգեվիճակը՝ նոր հորիզոններ բանալով նրա առաջ, նրա գիտակցության մեջ արթնացնելով Աստուծո ծառայության, սիրտ և զոհողության իղձը, այնպես որ երբ մայրը «Հայրդ և ես վրձնում էինք քեզ» ասաց, նրա մտքում հատում էր պատկերը ճշմարիտ և բուն Հոր, որին է միայն ինքը պարտական ամեն հնազանդություն: «Ի տան Հոր իմոյ...» խոսքերն այսպիսով առաջին փթթումն են լինում Հիսուսի մեջ աստվածային առաքելության իր գիտակցության:

Հիսուսի ժամանակաշրջանում նախակրթության բավական արժեք էին տալիս Պաղեստինում: Սինագոգներին կից կային դպրոցներ, ուր կարդալ-գրել էին սովորում տղաները վեց կամ յոթ տարեկանից սկսած: Իսկ տասներկու տարեկանին պատահին համարվում էր «օրենքի որդի» և ավելի խիստ կրոնական կրթություն էր ստանում, ման շաքաթօրյա աստվածաշնչական քալատություններում սինագոգների մեջ: Հիսուսը քարձրագույն դասընթացի չի հետևել, և այն գաղափարը, որ ամբողջ ցույց էր տալիս՝ ասելով, թե հյուսն Հովսեփի որդին օրենք է մեկնաբանում (Մրկ. Զ 3, Մատթ. Է 28—29, ԺԳ 54—55, Հովհ. Է 15), բավա-

կան է քննադատելու, որ նա անհաղորդ է մնացել քարձրագույն դասընթացի ուսուցումներից: Սակայն նա սովորել է կարուսլ, ինչքան որ անհրաժեշտ էր ս. Գրքի ընթերցման համար:

Հիսուսի կյանքի և կրթության առաջին և միակ միջավայրը եղել է իր ընտանիքը: Մովսիսական օրենքը պարտավորեցնում էր հրեա ծնողներին՝ Աստուծո պատվիրաններն ուսուցանել իրենց զավակներին: Բնականաբար Հովսեփի և Մարիամի քաղաքատվությունն այս դասերի վրա ավելացնում էր ման մի ռզեկանություն, որն այնքան անհրաժեշտ էր խորացնելու համար Հիսուսի հոգևոր դաստիարակությունն ու հետաքրքրությունը: Նաև պետք է նկատի առնել Նազարեթի դիրքը, նրա հեռավորությունը, որը գերծ էր պահում նրան Հրեաստանի չոր ու ցամաք կրոնական ձևապաշտություններից: Մյուս կողմից Նազարեթի ժողովուրդը նվազ մոլեռանդ էր՝ առհասարակ հեթանոսների հետ շփման մեջ լինելով: Քաղաքի բնական հրապուրիչ դիրքը ման, որ այսօր ևս դարավոր ավերումներից հետո այնքան առիճքնող է: Թվում է, թե Նազարեթի բյուրաշրջաններով շրջապատված հորիզոնը սահմանափակ է, սակայն քաղաքի վրա իշխող քարձուրներից կարելի է նայվածքով ընդգրկել հարավային կողմից մինչև Սամարիայի լեռները: հյուսիսից՝ «Հեթանոսաց Գալիլիան» մինչև արևմուտքում ուրվագրվող կապույտ շերտը, ակամա հիշել է տալիս Եսայի մարգարեի խոսքերը (Եսայի ԽԲ 4): Այսպիսի մի բնության հրաշալիք երկյուղած հոգու համար նրա մեջ պետք է ուժեղացրած լինի՝ տիեզերական չափանիշով փրկագործության դերի զգացմունքը:

Եթե Հիսուսն իր մեջ զգում էր Աստուծո կողմից ընտրված լինելու համոզման ուժեղացումը, նշանակում է, որ բնության կարգ ու կանոնից ավելի մի կարևոր ազդակ էլ կար, որը պատճառ էր նրա զարգացումի, այն է՝ ս. Գրքի անհատական ընթերցումը, խոկումները, աղոթքը: Ամեն քարեկեցիկ հրեա ընտանիք անպայման ցանկանում էր իր տանը ունենալ գոհն ս. Գրքից մի գլուխ: Ավետարանի պատմությունը մեզ ցույց է տալիս, որ Հիսուսը որքան Աստվածաշնչյով էր սնվել, որից հրաշալիորեն մեջբերումներ էր կարողանում անել: Նա փարիսեցիների ավանդությունների դեմ օրենքի անուանով էր մաքառում (Մատթ. ԺԲ 1—5): Եվ հասնում էր այնպիսի աննախատեսելի մտահանգումների, որոնք զարմացնում էին իր ունկնդիրներին (Դուկ. Խ 35—37): Անկասկած ս. Գրքի մանրամասն ընթերցումներով է, որ Հիսուսն աստվածային պատգամների քովանդակության հետ հարաբե-

րության մեջ էր մտնում: «Մի կարծեք, թե օրեցօր կամ մարգարեներին ջնջելու եկա, չեկա ջնջելու, այլ լրացնելու» (Մատթ. Ե 17): Կամ «Քննեցեք գրքերը, քանի որ կարծում եք, թե նրանցով հավիտենական կյանք կունենաք: Բայց հենց դրանք իսկ են. որ վկայում են իմ մասին, որովհետև դուք կարծում եք, թե հավիտենական կյանք ունեք» (Հովհ. Ե 39): Կամ «Եթե դուք հավատալիք Մովսեսին, կհավատալիք այդ դեպքում ուրեմն և ինձ, քանի որ ես հենց իմ մասին է գրել» (Հովհ. Ե 46): Որքան ավելի էր խորանում ճշմարտության ըմբռնումի մեջ, այնքան ավելի էր զգում իր առաքված լինելն Աստուծո կողմից՝ աշխարհի փրկությունը իրականացնելու համար: Իր սրբազան կոչման գիտակցությունը գտնում էր իր ներքին համոզմունքների մեջ, որոնք անբաժան են հոգևոր կատարելագործման ձգտումից: Այսպես աստիճանաբար զարգանում էր ոչ թե չարից դեպի բարին, այլ բնածին անմեղությունից դեպի կամավոր սրբությունը:

Ինչ որ անմիջապես աչքի է ընկնում Հիսուսի աճծի մեջ, նրա կենտրոնացման հազվադեպ գործությունն է՝ միացած ամենաթափանց զննողական կարողության հետ: Հիսուսը չի կոլումորոշվում իր շրջապատի տպավորությամբ: Ոչ միայն շրջապատին չի ենթարկվում, այլ, ընդհակառակն, նրա վրա է իշխում՝ իր ուզած կերպով կերպարանելու այն:

Ամեն ինչի որ հպում է, իրենցով է ոգևորում: Ինքը դառնում է կյանքի մշտադադար մի վառարան: Եվ այն վառ միտքը, որ այսքան առատությամբ տալիս է, նույնքան և ընդունակ է ընդունելու: Լայնորեն բաց, մշտադադար և զվարթուն, նույնիսկ իրերի խուսափուկ երանգներն իսկ իր աչքից չեն լրիպում: դիտում է մտերմագին և ճշտությամբ նույնիսկ դաշտերի շուշանների վայլքը, երկնքի թռչունների անհոգությունը, հավի մայրական գորգուրանքը, որ իր ձագերն է ժողովում թևերի տակ, երեխաների խաղերը, հարսանեկան խմբումները, իշխանազույցների հանդեսները, Եշխատավոր մարդու խոնջեցքը, և այս բոլորը նրա համար ալլելուրներ են դառնում՝ պատկերավոր դեպքեր համար Ավետարանի ճշմարտությունները: Հիսուսի հոգին կարծեք մի հայելի է դառնում, որի մեջ ցոլանում են ա-

ռարկաները բազմազան գույներով, ու ինքը երբեք չի կորցնում իր ինքնությունը, տպավորությունների այս հարափոփոխ ալիքներում: Այս առաջին հակադրության վրա գալիս են ավելանալու նաև նրա առնացի կորովը՝ գույթի և գորովի հետ միացած: Հրաքորքը լինելու չափ խիստ է դառնում, երբ ձաղկում է ժողովրդապետի կեղծավորությունը, լի է զգվածքով և քաղցրությամբ տուժվածների և տկարների հանդեպ: Վճիտ ու զուլալ է նրա իմացականությունը իր դատողությունների մեջ, պատրաստաբան՝ պատասխանների մեջ, և հրապուրող՝ ճառերի գեղեցկության մեջ: Մյուս կողմից իր հայեցողական կյանքն իր ամենից վեճ ու ներում ձևով է դրսևորվում իր առանձնության մղումներին: Իր առանձնացումի սերը բխում է եռանդուն գործունեության ձգտումից:

Հիսուսի աճծի մեջ նաև գեղեցկորեն ներդաշնակվում են ծառայի խոնարհությունը և հոգու արքայական վեհությունը: Պատկալն ասում է, թե մարդու մեծությունը արտահայտվում է ոչ թե երկու ծայրերից մեկի վրա կանգնելով, այլ լցնելով երկուսի միջոցը: Որքա՞ն այս խոսքերը պատշաճում են Հիսուսին: Աշխարհի Փրկիչն ունեցել է իր նկարագիրն ու անհատականությունը: Ավետարանների Փրկիչը վերացական մարդ չէ և ոչ էլ սոսկ մարդկային ըմտանքի մի անդամ: Ընդհակառակը, բոլորի աչքի առջև նա աճում է որպես «Որդի մարդու» աղբյուր՝ լի ծառայական ուժով և իր մեջ կենտրոնացնելով ամեն ինչ, որ կա մարդկության մեջ բարի և արդար:

Նույն «Որդի մարդու» հատկանիշով իսկ նա ընդունակ է հայտնելու մեզ Աստուծո կամքը, քանի որ մարդն Աստծուց է սերած (Գործք ԺԷ 28—29), դրանով էլ ճշմարիտ տաճարն է Հիսուսը՝ Արարչի տաճարը, որ ամխորտակելի է դառնում մեղքի դեմ տարված հաղթանակով՝ իր մեջ ընդունելու համար աստվածային պատկերը:

Ահա այսպիսին է Հիսուսն Աստուծո հետ իր միության մեջ և միաժամանակ հար եման իր շրջապատի մարդկանց, և որքա՞ն գերիվեր նրանցից: Այս կրկնակ նկարագիրն է, որ մի առեղծված է թվում և թվացել մարդկությանը Հիսուսի հրապարակային գործունեության առաջին իսկ պահից մինչև այսօր:





ԳԵՂՈՐԿ ԱՔԱՐՅԱՆ

(Լեւոնասիրական գիտությունների դոկտոր)

ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՂԻ»

Պարոյր Սեակի հիշատակին

Հայ միջնադարի մեծագույն բանաստեղծի ամենահուշակված տաղերից մեկը «Հարությունյան տաղն» է, որը բազմիցս հրատարակվել է մեր քերթողության լավագույն մտուցները պարունակող անխտիր բոլոր հատրմանիք ժողովածուներում և թարգմանվել է ռուս այլ լեզուներով: 10-րդ դարում այն վերածվել է երգի¹ և արդեն հազար տարի է, ինչ ուղեկցում է ժողովրդի կյանքին: Ամմահ Կոմիտաս վարդապետի ձեռքով գրի առնված և այսօր էլ բեմերում հնչող մեղեդին աչքի է ընկնում «երաժշտական հարուստ լույսնդականությամբ ու խոր հուզականությամբ: Սայիկը ծավալում լիակալ պոեմ է, հագեցված մերթ խոհուն, մերթ լիրիկական տրամադրությամբ»²:

Այսուհանդերձ տաղը ժամանակակից ընթերցողի առջև դնում չի բացել իր գաղտնիքները: Չեն վերծանված նարեկացու հիմ-

նական ալլաքանական մտքերը, որոնցից և կախված է տաղի ընդհանուր գնահատականը, ինչպես նաև՝ երաժշտական տրամադրության նրբերանգների բացահայտումը: Որոշ մտքեր էլ աղավաղված են մերթ ձեռագրերն ընդօրինակած գրիչների, մերթ թարգմանիչների, մերթ գրականագետ-մեկնաբանողների ձեռքով: Այս ամենի բացահայտումը և տաղի ընդհանուր ուսումնասիրությունը, վերծանումն ու վերականգնումը հանդիսանում են մեր սույն հոդվածի հիմնական նպատակները:

1

Տաղն սկսվում է «Փառլըք Քրիստոսի ամենագոր յարութեան» տողով: Սա տաղին ուղեկցող գլխավոր տողն է և կրկնվում է նաև տաղամիջում ու տաղավերջում: Սակայն նրա կապը տաղի անմիջական բովանդակության հետ այնքան անսպասելի է, որ մեր գրականագետներից մեկն իրավամբ գրել է. «Այժմ դժվար է հասկանալ, թե ինչ կապ ունի այդ տաղը իբրև ալլաքանություն՝ Քրիստոսի հարության հետ (իսկ եթե չլիներ առաջին տողը, բոլորովին չէր էլ կարող այդ կապի մասին որևէ միտք ծագել)»³:

¹ Երաժշտագետ Ն. Թամբալյանի կարծիքով տաղը երգել է վերածել ինքը՝ Նարեկացին: Տես Ն. Թամբալյան, Կոմիտասը և Նարեկացու տաղերը. «Կոմիտեի Երևանի մասնաշաղկան», 1989, № 3, էջ 43:

² Բ. Աթայան, Այվերավոր ներդրում հայ երաժշտական խաղաղության մեջ. «ՀՍՍՀ ԳԱ «Ցուլն. կազմի», 1953, № 6, էջ 83:

³ Մ. Լկյան Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955, էջ 154:

Այլաբանորեն ներկայացված գործողությունների առանցքը տալիս սայլն է, քայքայվել և օրս «հայտնի չէ, թե Նարեկացին ինչ է նկատի ունեցել, երբ նշել է, որ սայլը տեղից շարժել կարող է միայն սայլապանը»⁴:

Այդ սայլապանը, ինչպես ինքը Նարեկացին է հայտնում, ոչ այլ ոք է, քան Հովհաննես Մկրտիչը: Սա նկատի ունենալով՝ Ա. Չոպանյանը գրել է. «Որպեսզի սայլը քալե ու հասնի Երուսաղեմ ու մարդկությունը ազատագրվի, պետք է, որ Հիսուսի գալուստն ավետող Հովհաննեսը (ծորոն ճոճ և ճապուկ) ձայն քարձրացնե, ու սայլին կործանի՝ Ավետարանը իր քարքառը լսելի րեն»⁵: Այստեղ պարզապես կրկնված է Նարեկացու իրեն խոսքն այն մասին, որ սայլի շարժման դրդիչը Հովհաննեսն է և՛ որ սայլի կործանը այլաբանորեն նշանակում է Ավետարան: Իսկ թե ինչո՞ւ է Նարեկացին Հարություն տալի թվանդակությունն ընտրել անպայման սայլի շարժումը, ինչո՞ւ այդ սայլն սկզբում չէր շարժվում, ինչո՞ւ սկսեց շարժվել միայն Հովհաննեսի միջամտությունից հետո՝ այս հարցերը մնում են անպատասխան:

Ստորև մենք կփորձենք գտնել պահանջվող պատասխանները, քայքայվել այդ հարց է ծագում. եթե «այլաբանության պատճառով, գուցե և աղավաղված լինելով, հորինվածքի գաղափարը մթնած է»⁶ և տալի իմաստը լրիվ հայտնի չէ՝ ի՞նչն է եղել նրա գնահատման չափանիշը:

Հարցի պատասխանը տալիս են առաջին հերթին տաղը պարունակող ձեռագրերը: Սրանցում ընդօրինակված է մեծ մասամբ տալի առաջին մասը: Իսկ մեկնուղական շարունակությունը գտնում ենք շատ քիչ ձեռագրերում: Տալի միջնադարյան երաժշտական ձայնագրությունները նույնպես հիմնականում ընդգրկում են առաջին մասը, որն «ունի ինքնուրույն նշանակություն ևս ու տակավին միջնադարում էլ կատարվել է որպես առանձին երգ... ՁՆ 3188 ձեռագրում,

օրինակ, բերված է քննարկվող տալի հենց միայն առաջին հատվածը», որն «ինքն իր մեջ ամբողջական մի երգ է»⁷:

Այսպիսով՝ միջնադարից մինչև սեր սերը տալի գնահատման հիմնական չափանիշ է հանդիսացել սայլի հանդիսավոր երթը պատկերող առաջին մասը, որն իրավամբ չգերազանցված մի պատկեր է իր տեսակի մեջ:

Մասիսի լանջերից գլորվելով իջնում է գեղեցիկ զարդարված սայլը, որը քաշող սպիտակ նզնների մազերը մարգարտի պես փայլում են և որի վրա խուրձ-խուրձ քարձված մանուշակը, կորնկանը, խլորձը իրենց բազմերանգ հմայքով և անուշ քույրով ուղեկցում են սայլին: Այս ամենն այնքան գեղեցիկ է, որ չէր կարող չհմայել ընթերցողին ինչպես միջնադարում, այնպես էլ այսօր:

Հայց սա նախ և առաջ այլաբանական իմաստ ունի և վերաբերում է Հին ու Նոր Կտակարաններին: Աստվածաշնչական մեծությունները պատկերելու համար հայ չափածո քերթության մեջ առաջին անգամ որպես այլաբանության միջոց է ընտրված սայլը: «Գլուղական սայլի և սայլապանի մի այնպիսի հիասքանչ նկարագրություն մեր գրականության մեջ, միանգամայն նորություն էր, իսկ այդ նորության կարևոր կողմերից է արտահայտությունների և բառերի մեծ մասի ժողովրդական բնույթը»⁸:

Հիրավի, Նարեկացին սայլի շարժումը ավելի ցայտուն դարձնելու համար կրկնում է «գիլ» «գիլ» հնչյունները, ճիշտ այնպես, ինչպես ժողովրդական երգի հեղինակը կրկնում է «գալ», «գալ» բառերը:

Այսպես. Նարեկացին գրում է.

Ի Մառեսց աջ կողմանէն

Սայլիկն ի գիլ գայր, ի գիլ...

Իսկ ժողովրդական երգի մեջ ասված է.

Ասիս-Մասիս լեռնէն ի վար...

Գալ, գալ գազան⁹ գան իմացեր...

⁴ Армянская средневековая лирика. Вступительная статья, составление и примечание Л. М. Мкртчяна. Ленинград, 1972, էջ 365.

⁵ «Անահիտ», Փարիզ, 1907, 9—4—5, էջ 49:

Չոպանյանը օգտվել է իր ժամանակ հայտնի երգիչ տպագիր միակ ընթերցվածքից, որը գրչական վրիպում է, այս ձևով. «Ի յառիւղէն առեալ շարժումն կործն սայլին, նա ձայն անէր իզգամողին» (Գրիգոր Նարեկացի, Մատենագրությունը, Վեհափառ, 1840, էջ 474): Այստեղ «նա ձայն անէր» արտահայտությունը պարունակող տողը պատկերավոր միայն է սայլի կրիքին վերաբերող տողին և առիթ տվել «ավետարանի ձայնը լսելի դարձնելու» մտքին:

